Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

85
Ч-88

31 MAY 2008
19 NOV 2018

1703
85
Լեգ.

ԸՐԻՍՏՈՊԼՍ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Վ. ՄՈՆԹԻՒՆ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Ա. Մ. ՊԱՀԱՏԸՐԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1856

85-2

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Անհաւասիկ հարտար գրչէ ելած աքանչելի գործք մը, որ հայերէն թարգմանուած ի լոյս կ'ելլայ։ Հեղինակը այն հրաշակաւոր մարդն է, որուն համար իր ազգակից գիտնականներէն մէկը այս վճիռը տուաւ. Խիստ բարձր թռչելուն համար միշտ կը վախնաս որ վար պիտի իյնայ, և բնաւ չկայնար։ Իրեն երեք տարուան մէջ լմնցուցած Հոմերոսի թարգմանութիւնը անանկ գանձ մը եղած է Իտալացւոց գրականութեան որ ամէն գիտուն ազգաց նախանձելի է։ Այս Արիստոդեմ ողբերգութեան վրայ ալ սանկ կը պատմեն. օր մը Հռոմ գտնուած Իտալացի գիտունները տուն մը ժողոված ըլլալով Ալֆիերի անուանի ողբերգակ բանաստեղծը ոնոնց առջև իր Վիրգինիա ողբերգութիւնը կ'արտասանէր. հոն կը գտնուի Մոնթին ալ որ դեռ երիտասարդ էր այն ատենը և անանկ աշխոյժը կը վառի, որ տունը դարցածին պէս միտքը գալով քանի մը օր առաջ Պաւսանիասի մէջ կարդացած Արիստոդեմի պատմութիւնը, կը նասի ինքն ալ նոյն նիւթին վրայ ասս հիանալի ողբերգութիւնը կը շարադրէ քիչ ատենուան մէջ, և Փարմայի մլցարանէն կը պսակուի։

Այս տեսակ գրուածքի ճաշակ մը տալու համար մեր ազգայնոց առինք աշխարհաբար թարգմանեցինք այս անմահական գործքը, որչափ որ կարելի է գիւրիմաց ոճով, որպէս զի ամէնքն ալ կարենան հասկընալ։ Միայն այս կը փափաքինք որ մեր ազգայինք ալ նոյն ընդունելութիւնը ցուցնեն ինչ որ Իտալացիք և ուրիշ կրթեալ ազգերը ցուցուցին այս ողբերգութեան առաջին անգամ հրատարակուած ատենը, մենք ալ ան ատենը մեր աշխատութեան վարձքը առաւելութեամբ ընդունած կ'ըլլանք։

7398-579

04.07.2013

24273-ԿԱ-2

ՆԻՒԹԸ

Ողբերգութեան նիւթը Պաւսանիասին Մեսսենիացւոց պատմութենէն առնուած է։ Ոճիրը, որուն փառասիրութիւն և բարկութիւն գլորեցին Արիստոդեմը սպաննելու իր աղջիկը, անանկ է՝ ինչպէս որ ինքն իր սարսափելի պարագաներովը հաւատարմութեամբ կը պատմէ առաջին վարագուրին տեսարանին մէջ։

Ուրուականին երևնալը, զիրքն որ բոլոր անկէ ետքի կեանցը մէջ փարատեցին այն անուանի յանցաւորը, և յուսահատութիւնն՝ որ վերջապէս անոր ինքզինք սպաննել տուաւ խողխողած աղջկանը գերեզմանին վրայ, այս ամէնն ալ պատմութենէն է։ Մնացածը բանաստեղծինն է։

ԱՆՁԻՆՔԸ

ԱՐԻՍՏՈԴԵՄ ·	ԼԻՍԱՆԴՐՈՍ ·
ԿԵՍԻՐԱ ·	ՊԱԼԱՄԵԴԷՍ ·
ԳՈՆԻՊՈՍ ·	ԵՒՄԷՈՍ ·

Տեսարանը 'ի Մեսսինա Թագաւորական սրահին մէջն է, որուն խորունկը գերեզման մը կը տեսնուի։

(3433-55)

ԱՐԻՍՏՈԴԵՄ

ՈՂՔԵՐԳՈՒԹԻՒՆ

ԳԱՐԱԳՈՅՐ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԼԻՍԱՆԴՐՈՍ · ՊԱԼԱՄԵԴԷՍ ·

Լիսանդրոս. Լոյ՛, Պալամեդէս, արքունական Մեսսինայի խաղաղութեան պատգամաւոր Սպարտա ելս կը ղրկէ. Սպարտա յոգնած է պատերազմներէ, և մեր դափնիները, այնչափ քաղաքացեաց արիւնը թաթխուած, քեռն են ճակտի և նախատինք։ Ոխը նուաճեցաւ դթութենէ։ Յաղթանակեց խելքը, և համոզեց թէ խենթութիւն է Տերութեան ագահ նախանձի մը համար կտոր կտոր ըլլալ և երկիրը անապատ դարձընել։ Եւ որովհետև առաջ թշնամին եղաւ խաղաղութիւն ուզող, զգօնն Սպարտա յօժարութեամբ կը շնորհէ, և ես կը բերեմ։ Նէ՛ թէ այսչափ միայն, հապա նաև աղատութիւն անոնց, ով որ մերոնցմէ ծառայութեան քանուած է հոս, և քեզի մատնաւորապէս, սիրեցեալ բարեկամ, որ փափաքուած և լացուած, երրորդ տարին կը լեցուի, հոյ-

ակաղ գերի, առանց պատուոյ կը թողուին այս պարիսպներուն մէջ։

Պալամեդէս. Հատ հաճութեամբ կը տեսնամ քեզ, Լիսանդրոս. և մեծ ցնծութիւն պիտի ըլլայ ինծի քու ձեռքովդ նորէն ձեռք ձգել իմ ազատութիւնս և դառնալ ազգականաց գիրկն, և միւս անգամ հայրենի ափանց լոյսը վայելել։ Թէպէտ և քաղքն ասկեցաւելի անոյշ գերութիւն չէր կրնար պահել ինծի։ Գիտես, որ նաև Կեսիրա՝ Տալտիբիոսի գեղեցիկ աղջիկը հոս գերութեան մէջ է։ Բայց աս աղջիկը, որ այնչափ հնարքը գըտան Թագաւորին դիմացը իր չքնաղ կերպարանքը, և անոյշ կերպերը և պարկեշտ խօսքերը, որ Արիստոդեմ չուզեց զինքն ամենևին ծառայական շղթայով տեսնալ, մանաւանդ թէ լեցուց բարիքներով, և ինծի թողտուաւ կապանքս քակած՝ ազատ համարձակ պտըտիլ արքունեաց մէջ, ինչպէս որ կը տեսնաս, իր բաղդին գիս հաղորդ ընելով։

Լիսանդրոս. Ուրեմն Թագաւորը կը սիրի զանիկայ, Պալամեդէս։

Պալամեդէս. Հոր սրտով կը սիրէ զանիկայ, և միայն անոր քով խեղճը կ'իմանայ երբեմն սրտին մէջ ուրախութեան կաթիլ մը սրպրդիլ, և վիշտերը թեթևնալ, որ միշտ կը ծանրանան իր վրայ։ Առանց Կեսիրայի ծիծաղն փայլակ մը շողալ այն թախծալից և խրոովայոյզ երեսին վրայ բնաւ չէր տեսնուեր։

Լիսանդրոս. Իր խորին տխրութեանը վրայ բոլոր Յունաստան կը խօսուի, և պատճառը կը լսուի, բայց ես կարծեմ թէ ուրիշ տեղ չգիտցուածը հոս յայտնի պիտի ըլլայ։ Թագաւորը իրենց չարս դին հաղար ուշադիր դիտողներ ունին, որ անոնց ամէն խօսքը, ամէն հառաչանքը, նաև մտածութիւնները գիտեն։ Արդ հոս այսչափ աչքերու տակ իր տխրութեանը ինչ ճշմարիտ պատճառ հրաչակուեցաւ։

Պալամեդէս. Պատմեմ անկեղծաբար, ինչպէս որ զրցուեցաւ ինծի, այս դժբաղդին ցաւագին պատմութիւնը։ Մեսսինա սաստիկ ժանտամահէ կ'աւրուէր և Դելփիս[1] Եպիտոսի[2] ցեղէն կոյս մը ուզեր էր Պլուտոնի[3] զոհ։ Լիճակները ձգուեցան, և Լիկիսկեայ աղջիկը անուանեցին. ամբարիշտ և միանգամայն գթած հայրը գաղտնի փախուստով ազատեց զանիկայ մահուանէ, և ժողովուրդը ուրիշ զոհ մը կը խնդրեր։ Երևցաւ ան ատեն Արիստոդեմ և իրեն աղջիկը հրաշագեղ Դիրկէն յօժարութեամբ նուիրեց քուրմին։ Դիրկէն, ուրեմն, մկկալին տեղ սեղանին վրայ մորթուեցաւ. և կուսական արեամբը, ողողմելին, անյագ Տարտարոսին ծարաւն առաւ, իրենն ներուն ազատութեանը համար կեանքը տալով։

---

1 Դելփիս Յունաստանի անուանի քաղաքներէն մէկն է, հոն էր Ապոլոնի տաճարը, ուր եռոտանիի վրայ նստած քրմուհին պատգամ կուտար։

2 Եպիտոս Մեսսենիոյ անուանի թագաւոր մըն էր։

3 Պլուտոն դժոխքի աստուածն էր։

Լիսանդրոս. Այս արդէն գիտէի աս, ուրիշ հետև չորս դին մեծ համբաւը տարածուեցաւ, և միանգամայն մերը ապաժոյժ դիպուածն ալ կը զրուցէր։

Պալամեդէս. Ընիկայ Դիրկէի մահուան լսելով համբերել, և կսկիծն ու կատաղութենէն զայրացած կը ձգէք կուրծքը անողորմաբար և կը փոուի խրցին մէջ զարկը և արիւնոտ դիակ. հանելով սանկ մեռելոց թագաւորութեան մէջ, խելացընոր և գոհ ստուեր, իր աղջիկանը։ Եւ ահա տառապեալ Արիստոդեմին երկրորդ դժբաղդութիւնը, որուն յաջորդեց յետոյ երրորդը, և եղաւ Արգիայի տխուր և դառնակսկիծ դիպուածը։ Ընիկայ հօրը վերջին յոյսն էր. մէկ ծաղրալից և վայելչադեղ աղջիկ մը, որ դեռ մատղաշ ոտքերովը անորոշ հետքեր թողլով հազիւ թէ երկուք ու կէս տարուան կը հասնէր։ Ինք շատ անգամ գիրկն առնելով զանիկայ՝ կուրծքին մէջ քաշած նեղութիւններուն յիշատակը կամաց կամաց փարատիլ կ'իմանար, և անոյշ հնչել սրտին երկրորդ անգամ հօր անունը, և զուարթանալ երեսը։ Բայց քիչ ժամանակ քշեց հաճոյքը, և աս բարւոյ վերջին մնացորդն ալ վերցաւ անկէ։ Այսն դի մեր բանակը ան ատեն Ընիկէայի՝ կասկածաւոր կուռոյն յաղթելով խիստ պաշարմամբ ապառաժուտ Իթոմէն պատեր էր։

1 Ընիկէա և Իթոմէ Սպարտայի մոտ ամուր քաղաքներ էին։

Արիստոդեմ, որ անոր առնուելուն և կործանման վրայ վախ ունէր, իր գիրկէն փրցընելով աղջիկը՝ Հաւատարիմ Եւմէոսին տուաւ, որ իրեն հետ Արգոս[1] տանի, շատ տարակուսելով առաջ և հազար անգամ յանձնելով անոր սանկ ծանրագին կեանք մը։ Դատարկ մը տածութիւն։ Չոն ուր կը խառնուի Լատոն Ալփէոսի[2] հետ, մերոնց խումբ մը փախուստնէն իմանալով կամ պատահմամբ հոն երթալով, յուղարկաւորները ջարդուբարդ ըրին, և ոչ մարդու մը խնայեցին. և կոտորածին մէջ մէկտեղ սպաննուեցաւ արքունի աղջիկը։

Լիսանդրոս. Աս դիպուածին վրայ Պալամեդ, ուրիշ բան ալ գիտես։

Պալամեդէս. Ամենեին բան մը չեմ գիտեր։

Լիսանդրոս. Գիտցիր, ուրեմն, որ այն խումբին գլխաւորը Լիսանդրոս էր. թէ ես էի Եւմէոսի վրայ յարձակողը։

Պալամեդէս. Ի՞նչ կը լսեմ. դուն Արգիային սպաննողը. բայց թէ որ հոս իմացուի....

Լիսանդրոս. Վնաս պատմութիւնդ առաջ տար. մնացածին վրայ յարմար ատեն մը կը խօսինք։

Պալամեդէս. Արգիային դժբաղդութենէն ետքը Արիստոդեմ ինք զինք քոլորովին

1 Արգոս Յունաստանի անուանի քաղաքներէն մէկն էր, և երկայն ատեն ինքնագլուխ տէրութիւն ունեցած է։

2 Ալփէոս և Լատոն երկու պղտիկ գետերու անուններ են։

տխրութեան ձեռք մատնեց. բնաւ զուարճութիւն մը սրտին վրայ չշողաց. կամ թէ որ շողաց ալ՝ փայլակի նման եղաւ, որ ակօս մը կ՚ընէ ստուերին վրայ և կ՚անհետանայ։ Երբեմն կը տեսնաս անիկայ, որ տրտում և մոռածկոտ անմարդի տեղուանք կը պտտի, և սրտին խորունկէն դէպ՝ի երկինք կը հեծէ և կը հառաչէ. երբեմն չորս դին կ՚երթայ մոլեգին, երբեմն ողորմագին ձչալով. և միշտ յանուանէ իր Դիրկէն կանչելով կ՚ինայ գերեզմանին ոտքը, ուր անոր մխիթը դրուած է, և հեկեկալով կը փաթթուի անոր և անշարժ կը մնայ. անանկ անշարժ, որ քար մըն է կ՚ըսես, միայն թէ արցունքը կենդանի ջրայյանէ զինքը, որ երեսներէն լուիկ վար կը վազէ և գերեզմանը կը լուայ։ Ահա, ով Լիսանդրոս, այն խեղճին ողբալի վիճակը։

Լիսանդրոս. Թշուառ վիճակ։ Բայց ըսայ, ինչ որ կ՚ուզէ նէ, իմ հոգս չէ։ Նա Սպարտայի ծառայելու եկայ, չէ թէ թշնամիին ողբակցելու։ Բսոր վրայ ամենահարկաւոր բաներ ունիմ քեզի զրուցելու. բայց խօսելու աւելի ազատ ժամանակ պէտք է որոշենք։ Արդէն մէկը կը մօտենայ, որ կրնայ մեզ մտիկ ընել։

Պալամեդէս. Այո՛, Կեսիրան է։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԴԵՍԻՐԱ. • ՊԱԼԱՄԵԴԷՍ • ԼԻՍԱՆԴՐՈՍ •

Պալամեդէս. Լսկուր, գեղեցիկ Կեսիրա, ահա Լիսանդրոս քու հոյակապ հօրդ անուանի բարեկամը։

Կեսիրա. Պոնիպալոսէն, որուն քիչ մը առաջ թագաւորը զրուցեց, գիտցայ, ով քաջ, քու դալուստդ. և մէկէն քեզ գտնալու վազեցի։ Նայինք հայրէս ինչ լուրեր կը բերես ինծի, բարի ծերունին ինչ կ՚ընէ։

Լիսանդրոս. Մինչ քեզ տեսնելու յոյսը զանիկայ ողջ կը պահէ։ Բայն վայրկենէն, որ Տերապեան դաշտերուն մէջ թշնամւոյ ձեռքը խլեց քեզ անկէ, դժնդակ՝ անտանելի տագնապ մը միշտ կոխեց վրան. և խիստ գերութեան ամէն դէշութիւնները վրադ կասկածելով սիրտ առնելու պատճառ մը չի գտնար, և միայն մնացեր է անոր դժբաղդներուն տխուր մխիթարանքը, արցունքը։

Կեսիրա. Ձի գիտեր ինքը որչափ սիրով և որչափ բարերարութիւններով առատաձեռն եղաւ ինծի, աղնուականն Արիստոդեմ. և ինչպէս գորով, սէր, երախտագիտութիւն զօրաւոր կապերով կաշկանդեր են զիս անոր հետ. անանկ զօրաւոր, որ զինքը թողլատենս՝ կարծեմ թէ սիրտս կուրծքէս փրթիլ պիտի զգամ։

Լիսանդրոս. Լաւ միթէ այսչափ կը տրտմիս անոր վրայ։

Կեսիրա. Ամէն սրտի կը խօսին իր թը-

շուառութիւնները և ուրիշներէն աւելի՝ իմ-
նիս. և ոչ ալ կրնամ ըսել քեզի թէ ինք զինքս
կու տայի զանոնք քաղցրացընելու համար և
իր տխրութեանը բովանդակ պատճառը հան-
կրնալու։

Պալամէդէս. Ամրաքին նշաններէն դա-
տելով սոսկալի է։ Միայն Գոնի.պպոս, որուն
ազնստաբար իր մտածութիւնը կը բանայ, մի-
այն Գոնիպպոս կրնայ յաւիրշտակել անոր
սրտէն ահաւոր գաղտնիքը։

Կեսէրա. Ահա ինքը։ Ո՛հ, ո՛րչափ խը-
ռոված և վշտացած կու գայ։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԳՈՆԻՊՊՈՍ. ԿԵՍԷՐԱ. ՊԱԼԱՄԷԴԷՍ
ԼԻՍԱՆԴՐՈՍ.

Կեսէրա. Ա՜հ, ինչու՞ ասանկ տրտում,
ով Գոնիպպոս. և ինչո՞ւ կուլաս։

Գոնիպպոս. Դա՜ ո՞վ չի լար։ Ընիստո-
դեմ այնպիսի տխրութեան հասեր է, որ
կատաղութեան կը փոխուի. կը ցնորի, կը
հեծէ, կը հառաչէ, և տերևի պէս անդամ-
ները կը դողդղան. զարհուրած կը շրջրջէ
աչքերը, և երեսներուն վրայ արցունքները
ակօս ակօս չորցած կեցեր են։ Երկար ատեն
ցնորելէն ետքը վերջապէս իր սենեակները կը
թողու, և հոս օրուան լոյսը կը փափագի նո-
րէն տեսնալ։ Ուստի կ'աղաչեմ ձեզի որ
ամենքնիդ ալ հոսկէ հեռանաք, ազատ սիր-

փանք իր կսկիծը ուզելով։

Լիսանդրոս. Երբոր պատշաճ կը սեպես
Գոնիպպոս, քու տիրոջդ միտքը ճգէ, որ
Լիսանդրոս իրեն հետ խօսելու համար իր
հրամանին կը սպասէ։

Գոնիպպոս. Ամենին շուտ մը քեզի իմաց
կը տրուի

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԳՈՆԻՊՊՈՍ. ԵՐԻՍՏՈԴԵՄ.

Գոնիպպոս. Ի՞նչ է բնաւ դահին փառքն
և պայծառութիւնը. ո՛րչափ թշուառութիւն,
թէ որ մեռնէն նայիս, շատ անգամ անոր ջորս
դին կը պատէ։ —Ա՜հա Յունաստանի ամե-
նէն մեծ և ամենէն ահաւոր դահակալը, հի-
մայ անանկ տառապեալ և դժբաղդ եղած,
որ շատ դաժան է՝ ով որ չի ցաւիր վրան։
Եկուր, Տէր. մարդ չկայ հոս մեզ մտիկ
ընող, և կրնաս դժնդակ կսկիծդ դուրս թա-
փել համարձակ։ Մինակ ենք։

Ընիստոդեմ. Ով իմ Գոնիպպոս, ամէն
աչքի կ'ուզէի ծածուկ մնալ, և թէ որ կարե-
նայի ինծի նաև։ Ամէն բան կը տրխրեցընէ
զիս և կը նեղէ. և նոյն իսկ արևը, որ քիչ
մը առաջ փափագեցայ, հիմա կ'ատեմ և չեմ
կրնար համբերել։

Գոնիպպոս. Չ՚ապա, սիրտ առ, մի վա-
ատացըներ քեզ ասանկ։ Ո՞ր գացին Ընիստո-

դեմի վեհ ոգիքը, անդրդու�թիւնն ու քաջասրտութիւնը։

Episkoposներ. Իմ քաջասրտութիւնս, իմ անդրդուութիւնս. ես կորսընցուցի զանոնք։ Ես երկինքին ատելութիւն եմ. և երբոր երկինք կը գարշի իրենցմէ, նաև Թագաւորները ցած են և վատասիրտ. ես երջանիկ եղայ, ես հզօր եղայ. արդ մահկանացուաց վերջինն եմ։

Պոնիպոս. Այս ինչ կը պակսի քեզի, որով առջինը ըլլաս։ Շատ աղէկ կը տեսնամ ես, զարհուրելի մտածութիւն մը, որ ինծմէ կը ծածկես, քու միտքդ կը խռովէ։

Episkoposներ. Այո, Պոնիպոս, զարհուրելի մտածութիւն մը, և որչափ անորոգոյն է՝ դուն չես գիտեր։ Քու աչքդ չի Թափանցեր իմ սրտիս ներսը, և ոչ կը տեսնաս ալէկոծութիւնը, որ բոլոր տակն վրայ կ'ընէ զանիկայ։ Ա՛հ իմ հաւատարիմս, հաւատա ինծի, ես շատ Թշուառ եմ, անչափապէս Թշուառ, ամբարիշտ մը, անիծեալ մը երկնից ցասման մէջ. և սոսկումն ընութեան և ինծի։

Պոնիպոս. Ա՛հ, ինչ այլանդակ խառնակութիւն մտաց։ Ընչուշտ ցաւը քու խելքդ կը շլացընէ, և քու տխրութիւնդ ծուռ և ապականած երևակայութենէ առաջ կու գայ։

Episkoposներ. Այրանի Թէ ասանկ ըլլար. բայց կը ճանչնամ դուն զիս. գիտէս դուն ինչ արիւն իմ ձեռքերէս կը վազէ։ Տեսած ունիս դուն բացուիլ գերեզմանները և ներսերնէն ղրկել ուրուականները, որ իմ գահս

կործանեն. ձեռքերնին մազերուս մէջ խօթեն և Թագը յափշտակեն։ Լսած ունիս դուն չորս դիէդ ահաւոր ձայն մը որոտալ, որ կը պոռայ. Մեռէր, անպիտան, մեռէր։ Այո՛, մեռնիմ, պատրաստ եմ. ահա քեզի կուրծքս, ահա քեզի արիւնս. Թափէ բոլորը, ընութեան քէնն առ, և վերջապէս խալըսէ զիս քեզ տեսնելու սոսկումէն, անողորմ ստուեր։

Պոնիպոս. Քու խօսուածքդ կը սարսափեցընէ զիս, և բաւականէն աւելի զրուցեցիր դուն ինծի, որով ես հասկընամ և տեսնամ Թէ քու հոգիդ խիղճերէ տանջուած է։ Ինչ բանի մէջ մեղանչեցիր. քու ո՞ր յանցանքդ քեզի դէմ Աստուածներուն սրտմտութիւնը բորբոքեց։ Բաց ինծի քու խորհուրդներդ։ Քու Պոնիպոսիդ հաւատարմութիւնը քեզի ծանօթ է, և դուն շատ անգամ քու գաղտնիքներովդ պատուեցիր զանիկայ։ Հապա ասիկայ ալ ինծի հաւատա։ Շատ անգամ վրէժտաց ծանրութիւնը կը նուազի ուրիշի պատմելով։

Episkoposներ. Իմիններս զրուցելով աւելի կը ծանրանան։ Հոգ մի ունենար անոնց խորունկը Թափանցելու։ Մի բռնադատեր լուութիւնս լուծելու. Թող զիս, կ'աղաչեմ։

Պոնիպոս. Ոչ, չեմ ձգեր քեզ լռելու ըլլաս նէ։ Իմ երկայն ծառայութիւնս և այս ճերմակ մազերս քու երկմտութեանդ արժանի չեն։

Episkoposներ. Բայց ինչ կը պահանջես դուն աղաչելովդ։ Թէ որ ահաւոր գաղտնիքին քօղը

վեր առնելու ըլլամ, սոսկումդ պիտի դողաս։

Դոնիպպոս. Այ ինչ կրնաս դուն ըսել ինծի, որ աչքիս տակ հոգիդ փչելու սոսկումին տեղիք չտայ։ Վ՚էհազունդ, այս արցունքներուս համար, որ կը թափեմ, նուիրական ծնգացդ համար, որոնց կը պլլուիմ, ալ մի չարչարեր զիս . . . խօսէ։

Եբիսոդեմ. Ա՚յսչափ կը փափաքիս. Եւ լեր . . . . (Ո՛վ երկինք, ինչ է իմին յայտնածս։)

Դոնիպպոս. Խօսէ, առաջ տար . . . . վայ ինծի, ինչ սուր է այդ։

Եբիսոդեմ. Մահու սուր. նայէ՝ կը տեսնես սա վրան կպած արիւնը։

Դոնիպպոս. Ո՛վ Աստուած. ինչ արիւն է, ով թափեց։

Եբիսոդեմ. Իմ աղջիկս։ Եւ գիտես ո՞ր ձեռքը հանեց անկէ։

Դոնիպպոս. Լռէ, մի ըսեր, իմացայ արդէն։

Եբիսոդեմ. Այ պատճառը գիտես։

Դոնիպպոս. Չեմ գիտեր ըսելիքս։

Եբիսոդեմ. Մտիկ ըրէ, ուրեմն։ Կուրծքիդ մէջ սոսկումէ երակներդ սառիլ պիտի զգաս, բայց դուն ստիպեցիր զիս։ Լսէ ինծի, և բոլոր դժնդակ գաղտնիքը, և իմ ոճիրս սորվէ։ Մինչդ գայ այն ատենը, որ Դելիլիս մարդկային զոհեր հրամայած ըլլալով, Մեսսինոս Եպիտեան կոյս մը Երեբոսի[1]

[1] Երեբոս դժոխքի աստուածի մը անունն էր։

պիտի մոռնայ։ Մինչդ գայ, որ մահաբեր շունչ սափորէն հանդիսապէս Լիկիսկեայ աղջիկը ելաւ, և հայրը փախցընելով աղատեց զանիկայ, ուստի ուրիշ գլուխ մը կորսուելու էր. և հայրերն երկրորդ անգամ ահ ու դողով կը կենային իրենց աղջիկներուն վիճակին վրայ։ Այն օրերը նաև Մեսսենիոյ գահն այրի էր։ Այս ալ միտքդ բեր։

Դոնիպպոս. Այս կը յիշեմ ան. և միտքս կու գայ թէ արքայական պսակը քու, Դամիին և Կլէոնին[1] մէջ անորոշ կեցեր էր, և ժողովուրդը իրեք կողմ բաժնուած էր։

Եբիսոդեմ. Շատ լաւ, Դոնիպպոս։ Ժողովուրդը շահելու և գահը ապահովցընելու համար մտածութիւն ըսէ, որ վիրաց փառասիրութիւնը ինծի բերաւ։ Օգուտ հանենք ըսի ինքն իրենս, օգուտ հանենք ուրիշի տրկարութենէն։ Միշտ ամբոխը անոնն է, ով որ անոր աչքը կ՚առնէ. և շատ հեղ թագաւորութիւնը աւելի խորագետինն է։ Խաբենք, ուրեմն, այս անխելք խաժամուժը, և Լիկիսկեայ վրիպանքը շտկուի. անոր դարմանն իմ աղջկանս արիւնն ըլլայ, և իր արիւնովը ժողովուրդն և թագը գնուի։

Դոնիպպոս. Ա՜հ, Տէր, ինչ կ՚ըսես, ինչպէս կրցար այնպիսի անօրէն խորհուրդ մտածել։

Եբիսոդեմ. Հասկցիր, որ փառասէր

[1] Դամին ու Կլէոնը զօրաւոր իշխաններ և միանգամայն զօրապետներ էին Մեսսենիոյ մէջ։

1002 / 5381

մարդը անգութ մարդ է։ Իր մեծնալու նը-
պատակներուն և իրեն մէջ դիր հոր և եղբօր
գլուխը, կը կոխկրտէ երկուքն ալ, և եր-
կուքէն պատուանդան կ'ընէ ոտուըներուն ա-
ւելի բարձր ելլալու համար։ Ասիկայ ըրի ես
ալ իմ աղջկանս. ասանկ բրմաց տապարին
իմ Դիրկէս նուիրեցի։ Իմ խորհուրդիս դէմ
կեցաւ Դելամոն Դիրկէի տարփածուն. պա-
զատեցաւ, սպառնացաւ, բայց զիս ետ չը-
դարձուց իմ առաջադրութենէս։ Ահաւասիկ
տուած ան ատենը, ոտքս ինկաւ թողութիւն
խնդրելով, և ծանոյց ինծի թէ Դիրկէն չէր
կրնար զոհուիլ. Ուստուածը կոյսի մը արիւն
ուզած ըլլալով, և Դիրկէն իր արգանդը դե-
ռաբողջոյ զաւակով արդէն բեռնաւորեր էր,
և թէ իրեն կ'ինար փեսայութեան իրաւունք-
ները։ Ի բայ հասաւ նաև մայրը օգնութեան,
և հաստատեց Տելամոնի զրուցածը, որով
կատարեալ հաւատք և հաստատութիւն ա-
ռաւ բանը։

Դոնիպպոս. Այս ինչ ըրիր ան ատենը։

Եբիսոդեմ. Արագ կտրեցայ բարկութե-
նէս. և մէկ դիէն իմ խայտառակեալ պա-
տուոյս ամօթը զիս խայթելով, և մէկալ դիէն ա-
ռաւել ևս իմ փուճը ելած փառասիրութիւնս,
ինչու որ ասանկ ձեռքէ փախուցած կը կարծէի
թագաւորութիւնը, նայեցայ Տելամոնի երե-
սը, և ոչ խօսք մը զրուցեցի. հապա հան-
դարտ զիս ձեւացընելով և սաստիկ կատղած,
աղջկանս եկայ։ Ինկողինին վրայ ինկած
գտայ զինքը, որ դեղնած, այլայլած, վը-

հատած, թոյլ թմրութեամբ դոցեր էր աչ-
քերը, որոնք երկայն արցունք թափելէն յոգ-
նած էին։ Ահ Դոնիպպոս, ինչ կատաղու-
թիւն չէր խանդաղատեր այն կերպարանքը.
բայց բարկութիւնը կոյրցուցեր էր զիս, և
զայրոյթը իմ երակներուս մէջ կեռար. ուստի
նզովեալ դաշոյնը քաշելով, և բոլորովին բը-
նութեան սարսափը մարելով, բարձրացուցի
ծայրը և սրտին ուղղած կուրծքը խօթեցի։
Բացաւ աչուընները ողորմելին և ճանչցաւ զիս,
և ծածկելով երեսը, Ո՜հ հայր է՛մ, ո՜հ հայր է՛մ
ըսաւ, և ալ բան չըսաւ։

Դոնիպպոս. Սոսկումէս կը սառիմ։

Եբիսոդեմ. Այնեցուր սոսկումդ, վասն
զի դեռ ատեն կ'ուզէ, որ հոգւոյդ վրայ բո-
վանդակ վազելը իմանաս։ — Ել ոչ ձեռք,
ոչ շրթունք կը շարժէր սրախողխող աղջիկը, և
ես բոլորովին արեան պլըշտիկած, և առանց
խելքի, ինչու որ ապուշ դարձուցեր էր զիս
ոճիրը, սենեկէն դուրս կ'ելլայի, երբ միտքս
ինկաւ իր մեղքին մտածութիւնը. և ուստի
բարկութիւնը նորէն բռընկելով և անմտու-
թենէ՝ կատաղութենէ զրգռուած դարձայ
տաք և դողդոջուն դիակին քով, և բացի կո-
ղը անդգամութեամբ և յիմարաբար սկսայ
փնտռել սրով մեղքը ջերմաջերմ աղիքնե-
րուն մէջ. աւաղ որ անմեղ էր անիկայ։
— Ան ատեն աչքերէս փարատեցաւ կուրու-
թիւնը. ան ատենը խաբէութիւնը երևան
ելաւ ինծի, և գթութիւնը զեղաւ սրտիս
մէջ։ Սարսուռ վազեց ոսկրներուս մէջէն և

քար դարձուց աչքերես վար վազող արցունք-
ները. և ասանկ կեցայ մինչև որ յանկար-
ծուատ ներս մտաւ մայրը, և տեսնալով դառն
տեսարանը՝ դեղնած, պաղած, մունջ կանկ
առաւ։ Եղբը կայծակի մը պէս վազեց յու-
սահատ, և յաւիշտակելով պողովատիկը, որ
քիչ մը առաջ վար ինկեր էր ձեռքէս, կուրծ-
քին դամեց, և թողուց աղջկանը վրայ ինկալ
ինք զինքը, և անոր երեսին վրայ հոգին փը-
չեց։ Ահա երկուքին ալ վերջը. ահաւասիկ
գաղտնիքը, որ տանը հինգ տարիէն 'ի վեր
սրտիս մէջ թաղուած էր. և մինչև հիմայ
ալ կը կենար հոն թէ որ դուն չըլլայիր։

Դոնիպոպոս. Դժնդակ պատմութիւն զը-
ըուցեցիր և քուկին խօսքերդ բոլոր իմ անդամ-
ներս սառուցուցին, և անոնք մտածելէն
ալ խոյս կու տայ հոգին։ Բայց ըսէ ինծի,
ինչպէս ամէն աչքի ծածուկ կրցան մնալ ա-
սանկ զարհուրելի բաներ։

Եպիսկոպոս. Օ արմանք մի ունենար։
Հաւոր և մեծ էր իմանուն, և զիս գահին
կը հրաւիրէր քաղաքութեան ձայնը։ Դիւրին
եղաւ ուստի խաբէութիւն գործածել. և աղէկ
գիտես դուն, որ գահի մը ստուերը մեծ է ո-
ճիրներ ծածկելու համար։ Քուրմերն՝ որ երբ
կընքին կամքը ստիպուած են լսելու, երբ
կարողները բռնութեան խօսիլ կու տան,
անձայն, մինաւոր, մութը օգնական առած՝
տաճարը փոխադրեցին մեռած Դիրկէն, և
ուստի հաստատուցին, որ այն գիշերը սեղա-
նին վրայ ծածուկ մորթուած։ Իր արեամբը

Աստուածները հաշտեցուցած ըլլայ։ Եւ թէ
այս քանիս վրայ սաստիկ վշտանալով մայրն
ալ ինք զինք մեռուցեր է։ Բայց անօրէնութե-
ան վրայ երկընքին աչքերը կը հսկեն. և
Աստուած մը կայ անշուշտ, որ կ'երթայ գե-
բեզմաններուն մէջ երկայն քուներ նէն ար-
թընցընելու մեղքերը, և ամբարիշտներուն
սրտին վրայ անոնց աղաղակը կը ղրկէ։ Մինթէ
անիկայ ալ յայտնեմ։ — Քանի մը ատենէ
'ի վեր մէկ սոսկալի ուրուական մը.....

Դոնիպոպոս. Ո՜հ, խաժամուժին ձգէ ու-
րուականներուն վախը և գերեզմաններէն մի
յարուցաներ մեռեալքը։ Հապա, սիրտ առ,
վասն զի քու այսչափ կսկրծալուդ չի կրնար
ըլլալ որ երկինք քու յանցանքիդ ներէ։
Մեծ է ան, իրաւ է, բայց աւելի մեծ է
Աստուածոց գթութիւնն ալ։ Հանդարտէ,
և աւելի հարկաւոր մտածութեան մը
տեղիք տուր։ — Սպարտայի դեսպա-
նը հասաւ, զրուցեցի քեզի, և խաղա-
ղութեան դաշինքներ կը բերէ։ Ինքնիշ
դիր անոր, և մտածէ որ հայրենիքը կ'աղա-
չէ, և այս խաղաղութիւնը քեզի կ'ապսպրէ, և
իր պարիսպները, և խանդարած տէրութեանը
կտորբրդուած մնացորդները։

Եպիսկոպոս. Ուրեմն հայրենեաց խօսքն
ըլլայ։ Երթանք։

—

ՎԱՐԱԳՈՅՐ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԼԻՍԱՆԴՐՈՍ . ՊԱԼԱՄԵԴԷՍ .

Պալամեդէս . Ի՞նչ էր ինծի պատմածդ։ Այնչափ զարմանքով լեցուած եմ, որ երազ տեսնալ կ'երևնայ ինծի։ Կեսիրան Արիստոդեմի աղջի՞կ։

Լիսանդրոս . Այո՛, Կեսիրա իր աղջիկն է, կորսուած և լացուած Արգիան։ Ինչպէս Լատինի բերնին քով Եւմէոսէն յափշտակեցի զանիկայ, որ տասը-հինգ տարի է, և ինչպէս ան ատենը դուքս ինկաւ անմեղին վրայ պատմեցի քեզի։ Հիմա զրուցեմ, թէ ընդդէմ նոյն իսկ Արիստոդեմի, երբ հարկը պահանջէ նէ, ինծի թիկունք ընելու համար, բարեկամիս Տալտիբիոսի տուի զանիկայ՝ որ մեծցընէ, և երդմամբ բրնադատեցի զինքն, որ ծածուկ պահէ գաղտնիքը։ Ինք մեծցուց և սիրեց զանիկայ իբրև իրեն բուն աղջիկը. անոր հայր կարծուեցաւ, և ինքն ալ յօժարեցաւ. և թէ որ բնութիւնը չբրաւ նէ, սէրը այդ պակսութիւնը լեցուց։

Պալամեդէս . Այ ամենևին չկասկածեցաւ Կեսիրա այդ բանին վրայ։

Լիսանդրոս . Ամենևին չէ։

Պալամեդէս . Հապա ի՞նչ եղաւ Եւմէոս, որ զանիկայ կը տանէր։

Լիսանդրոս . Եւմէոս ապահով բանտ մը դրուեցաւ։ Այս ուզեցի պէտք եղած ատենը Հիմարտութեան վկայ ընել ան, և իմ առանձնական օգտիս համար, չէ թէ գթութեան համար ողջ թողուցի զինքը։

Պալամեդէս . Դեռ ողջ է արդեօք։

Լիսանդրոս . Ցեմ գիտեր, ինչու որ մինչև հիմայ հայրենի պարիսպներէն հեռու բրնեց զիս զինուց արհեստը, և Տալտիբիոսի հաւատացուցեցաւ բանտարկեալը։

Պալամեդէս . Հիանալի՛ պատմութիւն։ Բայց աս խեղճերուն այնչափ մնասովը, ինչու կ'ուզես հիմայ ծածկել գաղտնիք մը, որ ալ օգուտ չունի։

Լիսանդրոս . Օգուտ ունի Սպարտայի ատելութեանը և իր ծածուկ քաղաքական խորհուրդներուն, և օգուտ ունի միանգամայն ընդհանուր վրէժխնդրութեան։ Մի՞թոզ բեր, որ թշնամեաց մեծագոյնը Արիստոդեմ է։ Մեր արիւնովն, որ իր տուրը թափեց, դեռ կարմիր կեցած են Ինփէայի հովիտները։ Սպարտացի հարսերը դեռ կուլան դատարկ առագաստներուն վրայ. և կուլամ ես ալ, անոր ձեռքովը խողխողած, հայրս և եղբայրս։

Պալամեդէս . Ինքը պատերազմի մէջ իբրև զինուոր սպաննեց զանոնք, չէ թէ իբրև աւազակ։

Լիսանդրոս . Այ միթէ ասոր համար պէտք է ներեմ անոր և քի՛չ գարշիմ իրմէ։

Պալամեդէս . Գարշի՛լ իրմէ, ինչու. թողութիւն ըրէ ինծի. ես ալ կը յիշեմ կոտո-

րածը, և հայրենի տուներուն բոցերը. և դիմացս կը տեսնամ դեռ այն հրդեհներուն մէջ Ըրիստոդեմն իմ որդւոցս արիւնը թաթխուած։ Բայց չեմ գարշիր իրմէ անոր համար. վասն զի ես ալ նոյնը ըրած կ'ըլլայի իրեն, կարենալով։ Մանաւանդ թէ շատ շնորհակալ եմ, որ մարդասիրաբար իմ շողթաներս քակեց իրրև բարեկամի. և թէ որ ես Սպարտացի չըլլայի նէ, զինքը Մեսսենիացի կ'ուզէի։

Լէսանդրոս. Շատ աղէկ կ'երևնայ, որ խիստ և զօրաւոր առաջին զգացմունքները գերութիւնը կ'եղծանէ։ Բայց թէ որ դուն փոխուեցար նէ, ես չփոխուեցայ, և թէ որ սրտիս մէջ առաքինութիւն մը կը բնակի նէ, անշուշտ թէնամիս վրայ գութը չէ, ինչու որ աղէկ չէի ծառայեր իմ հայրենեացս թէ որ Սպարտական ոգւոյն պարտքը մոռնալով, տըկար կիրքի մը համար ես զանիկայ մատնէի։

Պալամեդէս. Գութը տկար կիրք։

Լէսանդրոս. Ինչիրաւ ալ և ամօթալից, թէ որ հայրենեաց կը փնասէ.... Բայց կեսիրան կու գայ։ Քաշուինք հոսկէ, ուրիշ տեղ աւելի համարձակ կը խօսինք։ Ես կ'ուզեմ որ այս գաղտնիքին ամենահարկաւորութիւնը իմանաս։

—

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԳՈՆԻՊՊԻՈՍ. ԿԵՍԻՐԱ.

Գոնիպպոս. Ինձմէ խաղաղութեան վերայ պիտի խօսին, կեսիրա. բայց ինչ պիտի ըլլայ այս առանձին խօսակցութեան վերջը մարդ չի գիտեր։ Սոսկալիանաց աչքը թագաւորներուն ներքին մտածութիւնները չի տեսնար։ Գիտես դուն, որ անոնց կ'ինչպէս կարգադրել, և մեզի ծառայել։ Բայց ես խաղաղութիւն կը յուսամ. և խաղաղութիւն, միայն թէ չափաւոր ըլլան դաշինքները, նաև Ըրիստոդեմ կ'ուզէ և կը փափագի։

Կեսիրա. Այս ալ ան կը վախնամ, և պատճառը չեմ գիտեր ըսել քեզի. և ուստի իմ սիրտս երկու բաժնուած է. անդիէն Սպարտա զիս կը կանչէ տառապեալ հայր մը և անդիէն Մեսսենիա կենալու զիս կը հրաւիրէ Ըրիստոդեմի գութը, և գիտէ երկինք ալ թէ զանիկայ ձգելու հարկադրուիմ նէ սրտիս դժուար պիտի գայ բաժնուիլը։ Այս չեմ հասկընար այս անոյշ և գաղտնի ազդեցութիւնը, որ իրեն կերպարանքը իմ սրտիս վրայ ունի, և անկէց աւելի իր թշուառութիւնը։ Միայն աս կը հասկընամ, որ իրմէ հեռու ես տխուր և անմխիթար պիտի անցընեմ իմ օրերս։

Գոնիպպոս. Այս միթէ կը կարծէս դուն, որ անիկայ քեզ [illegible]

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.R.A. Публичная Библиотека
7/XI-1922
Инвент. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

պիտի անցընէ։ Խեղճը քու քովդ սովոր էր իր վիշտերը մոռնալ. շատ անգամ քու մէկ խօսքդ, քու մէկ ծիծաղդ, անոր հոգւոյն աչէկոծութիւնները կը հանդարտէր և կը թեթևցընէր կենացը դառնութիւնը։ Հիմայ քեզմէ հեռու դուն անոր անձկութիւնը մը-տածէ։

Կեսիրա. Ամհաւասիկ ինքը հոս կը մօտենայ, և երեսէն աւելի խաղաղ և աւելի լուրջ հոգի կ'երևցընէ։

Գոնիպոպոս. Ինքը խաղաղութեան վրայ խօսակցելու կու գայ, գործք մը տեսնալու, ուսկից կախուած է տերութեան բոլոր աղէկութիւնը։ Նէ երբոր իրեն ներսը այս մոտածութիւնը ձայն կու տայ, ուրիշները կը լռեն։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԱՐԻՍՏՈԴԵՄ. ԿԵՍԻՐԱ. ԳՈՆԻՊՊՈՍ

Արիստոդեմ. Գայ Սպարտայի պատգամաւորը։

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԱՐԻՍՏՈԴԵՄ. ԿԵՍԻՐԱ.

Արիստոդեմ. Ով որ նպաստաւոր երկինք յաջողէ ինծի այսօր, ով Կեսիրա, Մեսսենիոյ և Սպարտայի վերջապէս կը տեսնանք կռիւը վերջանալ, և խաղաղութիւն կ'ունենանք. և խաղաղութեան առաջին դառն պը-

տուղը պիտի ըլլայ քեզ կորսընցընել և ես ճնալ հոս տխուր և վշտալից, մինչդեռ դուն ուրախ՝ պիտի երթաս Սպարտայի անձկակարօտ պարիսպները տեսնելու։

Կեսիրա. Ուրեմն դէշ կը կարդաս դուն իմ սրտիս մէջինը. բայց երկինք աղէկ կը կարդայ և կը հասկընայ։

Արիստոդեմ. Ո՛վ մեծահոգի աղջիկ. և կ'ընտրեսս միթէ ինծի հետ կենալ և միթէ կրնաս փափաղիլ։ Եւ չէս յիշեր հայրդ, որ քեզի կը սպասէ, և միայն քեզ տեսնալու յուսովը կ'ապրի։

Կեսիրա. Հայրս իմ սրտիս մէջ կը կենայ, բայց դուն ալ կը կենաս հոն. և սիրտս քեզի համար ինծի կը խօսի, և սիրտս կ'ըսէ ինծի որ դուն անոր վրայ իրաւունք ունիս. քեզի կու տան անիկայ իմ շնորհասարտութիւնս, քու թշուառութիւններդ, և մէկ ուրիշ գորովմ'ալ, որ տարտամ հոգւոյս մէջ շըշնկոց կ'ընէ, և ոչ կրնամ զբուցել թէ ինչ է։

Արիստոդեմ. Ա՛հ սիրտերը իրարու կապուեցան. բայց բոլորն ալ և միայն քու հօրդ պարտական ես դուն աս աղէկեղ զգացմունքները։ Ընոր դարձիր և մխիթարէ զինքը։ Բաղդաւոր ծերը. գոնէ անոնցմէ չես դուն, որոնք երկինք հայր ըրաւ պատժելու համար։ Գոնէ մեռնելուդ ատենը պիտի ունենաս աչքերդ գոցող մը, և պիտի զգաս աղջկան մը համբոյրներէն երեսներդ տաքնալ... Ո՛հ, թէ որ բաղդը ինծի ձգած ըլլար զանիկայ, ես ալ կրնայի այնպիսի երջանկութեան մը զես

յուսացընել, և անոր գրկացը մէջ բոլոր իմ վիշտերս կը մոռնայի։

Կեսէրա։ Որոնն վրայ կը խօսիս, վեհազուն Տէր։

Երիսոդեմ. Աբգիայի վրայ կը խօսիմ. ներէ ինծի, թէ որ ստէպ կը յիշեմ նէ զինքը։ Ան էր, գիտես դուն, վերջին բարին, որով կը յուսայի ես մխիթարել իմ ծերութիւնս։ Հիմայ ամէն բան զինք իմ միտքս կը ձգէ. ամէն բանի մէջ անդութ խաբէութիւն մը ինծի կը նկարէ զանիկայ, և կը կարծեմ քեզ տեսնելով զինք տեսնալ, և նոյն ատենը սիրտս կը բաբախէ և կը դողայ. և երկինքը խաղ կ'ընէ իմ ունայն խանդաղատանքս։

Կեսէրա. Խեղճ հայր։

Երիսոդեմ. Անիկայ տարուոք քեզի չափ կ'ըլլար հիմայ, ոչ գեղեցկութեամբ վար և ոչ առաքինութեամբ։

Կեսէրա. Խրատցընէ դժնդակ խորհուրդ եղաւ այն զինք Աբգոս ղրկելը և ոչ վտանգը նախատեսանելը, որ քեզ ղրկեց անկէ։

Երիսոդեմ. Այո. դժնդակ խորհուրդ, յիմար խոհեմութիւն։ Նա միթէ բաւական ապահով չէր խեղճը իմ քովս։ Մի՞թէ զաւակները հայրենի կուրծքէն աւելի աղէկ վահան մը ունի՞ն։

Կեսէրա. Աքիսոս, ինչու երկինք քեզմէ առաւ զանիկայ։

Երիսոդեմ. Երկինք իմ ձախորդութիւնները կատարեալ կ'ուզէր։

Կեսէրա. Դու թէ որ ողջ ըլլար նէ քեզ զոհ կ'ընէր։

Երիսոդեմ. Կեսէրա, անոր փաթթուիլ ներէն մէկը միայն, մէկ փաթթուիլ մը և հերիք էր։

Կեսէրա. Դրանի՞ թէ ես ըլլայի անիկայ։

Երիսոդեմ. Լռէ որ դուն ըլլայիր.... զաւակս։

Կեսէրա. Ինչու զիս զաւակդ կը կանչես։

Երիսոդեմ. Սիրտս դրաւ այդ անունը շրթունքիս վրայ։

Կեսէրա. Դու ինծի ալ սիրտս խորհուրդ կու տայ քեզ հայր կանչելու.

Երիսոդեմ. Այո, այո, հայր կանչէ զիս. այս անուան տակ մէկ դիւթութիւն մը կայ, մէկ անուշութիւն մը, որ զիս կը յափշտակէ. և անիկայ կատարեալ իմանալու համար, պէտք է ինծի պէս խոնջ ըլլալ թշուառութեանց դառն բաժակը, և աղէկ մը զգացած ըլլալ ընութեան ծեծը, կորսընցուցած ըլլալ զաւակները, և յաւիտեան կորսընցուցած։

Կեսէրա. (Սիրտս կը ճանթի։)

—

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԳՈՆԻՊՈՍ . ԱՐԻՍՏՈԴԵՄ . ԿԵՍԻՐԱ .

Գոնիպոս . Տէր, Սպարտայի դեսպանը կու գայ :

Եբիսոդեմ . Ի՞նչ ատեն վրայ կը հասնի. գնացէք, բաժնուեցէք. Կեսիրա, բարով երթաս, նորէն կը տեսնուինք :

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԱՐԻՍՏՈԴԵՄ .

Եբիսոդեմ . Երթընցիք, ով իմ թմրած առաքինութիւնս. թագաւորութեան դատը պիտի պաշտպանենք, ժողովրդոց փափագը պիտի լեցընենք : Այո՛, այս անգամ թող հպատակը հրամայէ, և թագաւորը հնազանդի. բայց թագաւորի պէս հնազանդի և չերևնայ Արիստոդեմ, աղաչող և վախկոտ, իր թշնամիին խաղաղութիւն մուրալ : Եւ ոչ իմ ամէն խօսքերս խաղաղութեան վրայ ըլլան, ինչպէս որ արդէն կը կարծէ իր սրտին մէջ այս հպարտը :

ՏԵՍԱՐԱՆ Է.

ԼԻՍԱՆԴՐՈՍ . ԱՐԻՍՏՈԴԵՄ .

Եբիսոդեմ . Լիսանդրոս նստէ, և հա-

մարձակ յայտնէ ինծի քարեկամ կամ թշնամի Սպարտայի կամքերը :

Լիսանդրոս . Սպարտա Մեսսինայի թագաւորին ողջոյն կը ղրկէ, և խաղաղութիւն ալ, թէ որ կը փափագի :

Եբիսոդեմ . Ուզեցի ուրեմն կը փափագիմ. և քաղցր է ինծի լսելը հիմայ որ այնչափ կոտորածներէ և այնչափ քարկութենէ ետև, Սպարտա ետ կենալով անիրաւ պատերազմէ վերջապէս իր հին քարեկամութեանը կը դառնայ :

Լիսանդրոս . Անիրաւ պատերազմ. անանկ չէ, ես կը կարծեմ, երբոր անիրաւ մեսսի մը վրէժն է : Դուք Տելեկլոսի արիւնովը պղծեցիք Լիմնայու զոհերը. և գիտես դուն որ Տելեկլոս մեր թագաւորն էր : Այ և ոչ թէ ուրիշ բան այսպիսի մեծ դիմմարտութեան պատճառ եղաւ : Ցիշէ, քաջդ :

Եբիսոդեմ . Այս կը լսէի զանիկայ քեզ չամբչցընելու համար : Ո՞ւր արվեցաք կանացի զգեստներով կեղծաւորիլ և խաղաղութեան ապահովութեանը մէջ պարերու և հանդիսի ժամանակ ուրիշի կեանքը խարդաւանել բաղինին քով :

Լիսանդրոս . Երդածէն շատ տարբեր է համբաւը, և ոչ Սպարտա անանկ է որ պատերազմիլ ուզելով և բնաջինջ ընել թշնամի մը, անարժան պատճառանքի մը խոնարհի :

Եբիսոդեմ . Կայ ու կայ. մեծափառն Սպարտա պէտք չէ պատճառանքներով նուաստանայ, երբոր զօրաւորագունին տեղ ինք

զինք կը սեպէ։ Ուր սուրը կ'որոշէ կռիւները, անօգուտ բան կ'ըլլան զենակար պատճառը, ճշմարտութիւնն և իրաւունքը։ Եւ ոչ իրաւունքն է յայտնապէս Սպարտայի առաքինութիւնը, հապա մեծաշքութիւնն ազատութեան պարկեշտ ծածկութիւնը։ Ուստի ձեր մէջը սովորութիւն է փախչիլ իրաւացիէն երբոր կը վնասէ ձեզի և պատրաստ թուիլ ապօրինաւորին երբոր օգտակար է ձեզի։ Մէկմէկու դէմ գրգռել դրացի ազգերը, բաժանել անոնց ոյժը, և ետքը զատ զատ յանկարծուստ պատերազմի բռնել զանոնք և մատնութեամբ աւելի քան թէ յաղթութեամբ անարժան լուծի քաշել, և ասանկով բոլոր Յունաստան նուաճել։ Իրացրնէ շատ աղուոր արհեստ թագաւորութիւններ տիրապետելու, և դուք ազգերու օրինակ, դուք քաղաքակիցք Լիկուրգոսի, և ինքը ձեզի ձգեց այս օրէնքները։ քաջ լեցի, մէկդի թողէք այդ պաճուճեալ երևոյթները։ Աշխարհքիս դիմաց քիչ օրէնքներ ունեցէք և շատ առաքինութիւններ, և թագաւորէ ձեր մէջը նաև պատիւ, հաւատք և արդարութիւն։

Լիսանդրոս։ Աւրքայ, դեռ դթութիւնը կը թագաւորէ հոն, և թէ որ չթագաւորէր նէ ինչ կ'ըլլար ձեզի։ Ընդէն հիմն 'ի վեր տապալած կը կենան այրած Իթոմէի ժայռերն և աշտարակները։ Եւ թէ որ յաղթողն Սպարտա առաջ տանի իր յաղթութիւնը, ո՞ր Աստուածը ձեզ կը պաշտպանէ։

Աբիսթոդեմ։ Աբիսթոդեմ։ և միայն ինչ

ը բաւական է, քանի որ ողջ է։ և երբոր թագուի նէ մնիմիրը կը մնայ հոս, որ լրիվ ալ կը զարհուրեցրնէ ձեզ։

Լիսանդրոս։ Դրաջդ, ով որ ողջութեան ատենդ քեզմէ չի վախնար մեռնելէդ վերջը պիտի վախնայ։ Բայց թէ որ հոս միայն նախատինքներով մէկզմէկ կշտամբել կ'ուզենք, իմ գործքս լմնցուցած եմ (ա)։ Սպարտա գառնամ և ըսեմ անոր, որ սուրը պատեանը չի դնէ, վասն զի թշնամեաց մնացորդը նորէն ասպարէզ կը կարդայ իրեն։

Աբիսթոդեմ (բ)։ Դարձիր Սպարտա ինչպէս որ կ'ուզես, բայց ըսէ նաև անոր, թէ այդ մնացորդը զսպելու համար, պէտք է շունչ առնէ ինքը, և նախ նոր արիւն դնէ պարապ երակներուն մէջ։

Լիսանդրոս։ Բայց քիչ անկէ, որչափ որ Մեսսենիոյ պէտք է իր վերքերը առողջացրնելու համար, որոնց վրայ շատ կու լայ և կը հառաչէ։

Աբիսթոդեմ։ Թէ որ Մեսսինա կու լայ, Սպարտա չի խնդար։

Լիսանդրոս։ Բայց և ոչ կը խոնարհի խաղաղութիւն ուզելու։

Աբիսթոդեմ։ Լա՛, ես ուզեցի, և Սպարտա կը վախնայ որ չըլլայ թէ հիմայ զողջալով չընդունիմ։ Գիտէ որ Ելլադեայ, Արգոսի,

---

(ա) Որպէս վրայ Ելլադայ։

(բ) Որպէս վրայ Ելլադեվ։

Սիկիոնի՝ զէնքերը պատրաստ են ինծի օգնելու։ Գիտէ որչափ փափագ վրէժինդրութեան դիզուեր է և կ'եռայ Աբեսսենիական կուրծքերուն մէջ, և թէ ինչպէս սուր սուսերներ ունինք և յուսահատ քաջուկներ։ Գիտէ որ փոփոխական է զէնքի բաղդը, և կը յիշէ որ երբ մեզի յաղթեց նէ դաւով յաղթեց, քաջութեամբ ոչ երբեք։ Ահա, Լիսանդրոս, Սպարտական գթութիւնը. խաղաղութիւն ընդունիլ և գթութիւն պարծենալ պատերազմի մէջ նկուն մնալու վախէն։

Լիսանդրոս. Ուրեմն պատերազմ ընտրէ։

Արիստոդեմ. Խաղաղութիւն կ'ընտրեմ ես, և պատերազմ ընտրել ինծի չի՛նար, երբոր ժողովուրդը խաղաղութիւն կը խնդրէ ինծմէ։ Երանի՜ թէ Ճշմարիտ ըլլար... բայց հապա... բարեկամ ըլլանք, եղբայր ըլլանք, և հանգիստ տանք սուրերուն։ Մինթէ մարդկային բարկութիւնները յաւիտեան պիտի տևեն։ Մինթէ միայն մէկզմէկ ատելու և ջարդելու համար երկրնքէն պարգև առինք կեանքը։ Ընութիւնը մինթէ անոր համար թողուց իր ծոցէն երկաթը փրցընել, որպէս զի մարդիկ պարտական ըլլան մէկզմէկու կուրծքին դամելան, և մահու և ամբարշտութեան գործիք ընել։ Թէ որ բարկութեան վերջ չիտանք, քիչ ատենէն Սպարտա

1 Ելիդէ, Սիկիոն հին ատենը Յունաստանի մէջ հռչակաւոր քաղաքներ էին

և Աբեսսենիա մէյմէկ անապատ կը դառնան, և միայն կը մնայ անոնց մէջ լացող այրիներու և որբերու մուրացկան խումբ մը։ Եւ ի՞նչ կ'ըսէ մեր վրայ Յունաստան ան ատենը։ Կ'ըսէ որ Թէբէի դաժանութիւնները կը նորոգենք. թէ նոյն արիւնէ ծնած են Սպարտացիք և Աբեսսենիացիք, թէ երկու միայն եղբայրասպանութիւններ եղան Թէբէի մէջ և հոս այնչափ կ'ըլլան, որչափ խողխողած մարմիններ կը թողու Ճակատին մէջ մեր կատաղութիւնը։ Եւ ինչո՞ւ քնաւ այսչափ մեծ ցասումն։ Քիչ մը հողի կոշտերու համար որ հաղիւ թէ մեզ թաղելու կը բաւեն, որ կարմիր կը ներկուին հարց և եղբարց արիւնովը որոնց սպաննողն ենք։ Ահ ալ չիսօսուի Յունաստան այսչափ խայտառակութիւն մեր վրայ։ Եւ թէ որ համբաւը մեզ չի շարժեր, գոնէ շահը շարժէ։ Քոլերնիս կեցած են կատաղի Թէբէն և նախանձոտն Աթէնք, որոնք այսպիսի կուսոյ վախճանին կը սպասեն, որ յոգնած յաղթողին վրայ ելլան, յափշտակեն անոր յաղթութիւնը և տապալեն նորածին մեծութիւնը։ Հիմայ քանի որ ժամանակ կայ ապահովցընենք մեզ և խաղաղութեան վրայ խօսինք։

Լիսանդրոս. Իսկ ընդունելը կամ մերժելը զանիկայ բոլորովին քու ընտրութեանդ կը թողում։

Արիստոդեմ. Ամէն բանէ առաջ դաշինքները լսել վայելուչ է։

Լիսանդրոս. Ահաւասիկ համառօտիւ.

« Ընդիեան և Տայգետը[1] կու տաք, և ալ չէք գար Լիմնա տօն կատարելու » ։

Եբիսկոպոս. Աջին և երկրորդ դաշինքը կ'ընդունիմ, երրորդը կը մերժեմ, և պատճառը կը հարցնեմ ինչու Լիմնայի զոհերը կը խափանէ և այն պաշտպան Աստուածէն մեզ կը զրկէ ։

Լիսանդրոս. Լիմնէական ինչոյից մէջ նախ և առաջ պատերազմին բոցը պոռթկաց, և երեսուն տարի դեռ չբաւեց մարելու արիւնով. թէ որ պատճառը չվերնայ, երկրորդն ալ կը պոռթկայ ։ Հարկաւոր է ուստի, քանի որ բարկութիւնները ինջած չեն մեր մէջը, այսպիսի վտանգաւոր հաղորդակցութիւն մը կտրել ։

Եբիսկոպոս. Իր անուանը նախատինքովը Եբիստոդեմ խաղաղութիւն չի գներ ։ Կ'ըլլայ զինանիլ ստացուածները, պատիւները, կեանքը, զաւակները և ամէն բան գլխովին. բայց Աստուածները, Լիսանդրոս, խնամակալ Աստուածները, մեր հարց երկրպագելի կրօնքը, մեր ամէն պարտքերուն, մեր իրաւունքներուն առջինը . . . . . .

Լիսանդրոս. Լաւ մեր վրիպանքներուն, ան ալ զրուցէ ։ Ես մարդու կը խօսիմ, որ ամբոխին կարծիքին ծառայ չէ, զինուորի մը՝ որ այս Աստուածները, այս մարդկային երկիւղին ստուերները, կը նայի, և կը ծիծաղի, և ձեռքը միշտ սուրին վրայ կը կենայ ։ Ձեմ գիտեր մինչև հիմայ ուրչափ օգուտ ըրած ունի այս Լիմնէական Աստուածը ։ Աղէկ գիտեմ որ շատ զէն տուաւ առաջնորդը, և սակայն եթէ ալ դեռ շատ աւելի պիտի տայ, թէ որ զոհերը և եռանդագինները ատենին չքիչցնէ առջինէն աւելի աղէկ Աստուած մը, խոհեմութիւնը ։

Եբիսկոպոս. Զատ խօսքերու ազատ պատասխաններ տամ ։ Թէ որ մինչև հիմայ Աստուածները ինծի օգուտ մը չբրին, ինչու որ ճշմարտութեամբ չեմ կրնար գովել զանոնք, բայց չէ թէ անոր համար կ'անարգեմ. շատ ծածուկ և զօրաւոր պատճառներ ունիմ, որով կը պարտաւորիմ վախնալ անոնցմէ և պատուել զիրենք ։ Թէ որ դուն անոնք խոստովանելու համար պատճառ մը ունիս նէ, զանոնք պատուելու համար ալ ունեցիր. չունիս նէ յարգէ ժողովուրդեան մոլորութիւնը, նոյն իսկ Աստուածոց պէս ահաւոր, որ կը հրամայէ թագաւորաց և մէկու մը չի հնազանդիր ։ Եւ եթէ նոյն ձեր օրինակը առաջնորդէ ինծի ։ Ելիդէ օր մը Ոլիմպիական հանդէսներէն և ամէնքը գիտեն, ձեզ արտաքսել կ'ուզեր ։ Ի՞նչ խռովութիւն չհանեց այդ առարգանքը ։ Ի՞նչ զէնքի և բարկութեան պատրաստութիւններ դէմ չդրիք այնպիսի ոտնհարութեան մը ։ Եւ սակայն շատ տարբեր էր նախատինքը. իրեն մէկ բացարձակ իրաւունքը Ելիդէ կը գործածէր իր սեպհական երկրին մէջ, և իրենը չեղող Աստուածի մը հա-

1 Տայգետ լեռներու դոտի մըն է Լակոնիոյ մէջ ։

մար Սպարտա կը ծեծկուէր։ Բայց հոս հօրենական տաճառներու համար է ծեծը, ընտանի Աստուածներու համար։ Մերն է գետինը, մերն են սեղանները, և անոնք ամբողջ և անարատ պահելու համար պիտի կրուինք քանի որ ձեռք ունինք և բազուկ, և անոնք կտրուած, կուրծքերով պիտի կռուինք. վասն զի ուր կրծնքը պատերազմին դրօշակը կը տնկէ, գոց աչքերով կը ծեծկուի մարդ, և գթութիւնը, նոյն ինքն գթութիւնը կատաղութեան կը փոխուի, և սուրէն առաջ կեանքէ կը հրաժարուի։ Լինցընենք։ Թէ որ Սպարտա Աշմարիտ խաղաղութեան կը ցանկայ, խաղաղութեան առաջին հիմն ըլլայ թողուլ մեզի մեր Աստուածները. իսկ թէ որ կը հակառակի պատերազմի դառնանք։

Լիսանդրոս. Ազ, խաղաղութեան դառնանք. իմ մտածութեանս մէջ յամառելուն վրայ իմ փառքս չեմ դներ։ Ասիկայ պզտիկ մոքերու տկարութիւնն է, և ես չափաւոր մեծ կը սեպեմ զիս, որ քեզի թող տամ զիս յաղթած և համոզած ըլլալուն բոլոր պատիւը։ Նրթայ Լիմնայի պահանջմունքը։ Մէկալնոց կ'ուզեմ հաւանիլ, Բաղդ։

Երիսոդեմ. Կ'ուզեմ. ահա իմ աջս։

Լիսանդրոս. Ահա իմինս ալ։

Երիսոդեմ. Ինծմէ ուրիշ փափագելիք ունիս։

Լիսանդրոս. Բան մ'ալ չունիմ։

Երիսոդեմ. Ողջամբ մնա, Լիսանդրոս։

Լիսանդրոս. Երիսոդեմ, ողջամբ մնա։

ՎԱՐԱԳՈՅՐ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԵՐԻՍՈՏՈԴԵՄ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ՔՈՎ ՆՈՏԱԾ.

Երիսոդեմ. Ազ, էհ. Թէ որ յաւիտենական ըլլար գոյութիւնը, ես կ'իմանամ որ նոյնպէս յաւիտենական պիտի ըլլար իմ տառապանքս։ Ո՛վ երկինք, արիութիւն տուր ինծի համբերելու։ Մի հրապուրեր ձեռքս, մի կոյրցըներ խելքս... ինչ ըսի, խելքս... վայ ինծի։ Եւ թէ որ օգտակար ըլլայ անկորնչցընելը.... Թէ որ մէկ զարնուածք մը միայն իմ բոլոր վիշտերս վերջացընելու ըլլայ.... Ա՛յո՛, բոլորն ալ մէկ խոցուածք մը.... Հեռացընենք այս մտածութիւնը, չեմ ուզեր անոր հետևիլ. արդէն կը սկրսի չափազանց մոլորցընել զիս։ Եւ դու անողորմ, տաղտուկ ստուերը, հապա հանդարտէ անդամ մը, հանդարտէ, և ներէ ինծի։ Եւ քու հայրդ եղայ վերջապէս, մեծ չարագործ, գիտեմ, բայց սակայն հայրդ, և դուն իմ աղջիկս, որ այնչափ կը տանջես զիս և կը հալածես։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԴՈՆԻՊՊՈՍ. ԵՐԻՍՏՈՂԵՄ.

Դոնիպպոս. Ա՜խ աղջնիկ, լալու ժամանակ չէ հիմայ, երբ բոլոր Մեսսինա ձեռք ձրգած խաղաղութեանը վրայ կ'ուրախանայ։ Երթանք՝ փախիր այս ցաւալից տեղերէն. եկուր ինծի հետ. խայտացող ժողովրդեան քեզ ցուցուր, որ իր թագաւորը կը ինդրէ, որ քեզ կը փափաղի, և իր հայրը քեզ կ'անուանէ։

Երիսոդեմ. Այս հայը... ես այս անունը ատեն մը ունեցայ, և բերկրութեամբ սրտիս մէջ հնչել կ'իմանայի. ալ հիմայ չեմ իմանար։ Բնութիւնը տուաւ ինծի ասանկ սրբազան անունը, և իմ գաղանութիւնս վերուց ինծմէ։

Դոնիպպոս. Ընոնց վրայ, ուրեմն, ալ մի մտմտար։ Հիմայ բաներու ուրիշ կարգ մը կը սկսի։

Երիսոդեմ. Այս սակայն դեռ բոլորովին չկորսընցուցած կ'երևնար ինծի այս պատուական անունը, և շատ անգամ հայր ըլլալ կը կարծէի Կեսիրային քովը. կամ ան է որ թշուառներուն սիրտը միշտ պէտք ունի զեղանելու, և դիւրաւ կը թողու զինքը խանդաղատելու հեշտութեան. կամ թէ տարաժամ և վաղտալից տարիներուն տխուր հետևանքն է. կամ մէկ անծանօթ գորով մը, որ ինծի կ'իմացընէ գաւակներուս դառն պակասութիւնը, և ասանկ

սաստիկ անոնց փափագը կը զրգռէ կուրծքիս մէջ. կամ թէ մէկ ծածուկ Ըստուածէ մը ուղղած են այս սրտի բաբախմունքները, որ կը զգամ և չեմ հասկընար. այս կրնամ ըսել քեզի, որ անոր քովը իմ վիշտերուս արհաւիրքը կը դադրի. և մէկ լրիկ ուրախութիւն մը զիս կը մոլորցընէ, որ հեզիկ սպլբրդելով հոգւոյս մէջ կը հանդարտեցընէ խիղճերս, և սրտիս անդունդներէն արցունքը աչքիս վրայ կը հրէ։ Հիմակ աս սիրելի պատիրքն ալ քիչ ատենէն ինծմէ պիտի վերնայ։

Դոնիպպոս. Թէ որ աղէկ կը սեպես քեզի Կեսիրայի հոս մնալը, ուշացուր դուն ա՛նոր երթալը և նոյն ատենը աղաչաւորներ ղրկէ Տալտիբիոսի....

Երիսոդեմ. Այ կ'ուզէս որ այս տառապեալ հայրը, որուն կտոր մը կեանք կը մնայ, և որչափ որ կը բաւէ միայն իր զաւակը դրկելու և եաքը մեռնելու, կ'ուզէս դուն որ հաւանի ան..... Ը՜հ, երբէք դուն հայր չեղար. դուն չես իմանար ասանկ գորովալից անուան յարգը, և թէ որչափ քաղցր է զաւակի մը ներկայութիւնը և վշտալի հեռաւորութիւնը. դուն չես գիտեր ինչ անհուն, անպատմելի ցնծութիւն է նորէն տեսնալը զանիկայ, և հաճութենէ դողացող երկու թևերը վզին նետելը, և երես երեսի վրայ դնելը, և երկայն ատեն անոր հետ գիրկ գրկի փաթթուած մնալը, և ուրախութենէ լալը։ Հիմակ ուրիշ մը պիտի ունենայ այսպիսի մեծ երջանկութիւն մը. ես միայն բնաւ պիտի

չունենամ, ինչ։

Դոնիպոս. Ուրեմն ուրիշ կողմանէ անոր փոխարէնը վնտռէ, և չափազանց տխրութեամբ երկնից մեծ բարութիւնը մի զայրացներ, որ հաշտուած կ'երևնայ և դուն չես տեսնար։ Հաւատա, որ դուն քեզմէ քու վիշտերդ չափազանց կը ծանրացընես, և թէ օր մը մեծ անօրէնութեամբ յանցաւոր ըլլիր ինք զինքդ, միթէ մուցար ետքը, որ տրկար մարդս կը մեղանչէ և երկինք կը ներէ։

Եբիսոդեմ. Բայց կը պատժէ ալ, և ես աղէկ կ'իմանամ որ իմ պատիժս դեռ լրացած չէ։ Ո՛վ Թիմոթեայ ժայռեր, ո՛վ կարկաչահաս Յատոնի և Պամիսոսի[1] սրբազան ափունք, ալ պիտի չլսեք իմ յաղթութեանցս պատերազմական երգերը։ Ո՛վ արքունիք, ո՛վ մեծահոգի Հերակղիդեանց տուն, անշքացեալ և անմեղ արիւնով դեռ կարմիր, ծածկէ ինք զինքդ սոսկումով, ինկիր ամբարիշտ հօր մը գլխուն վրայ և քու աւերակներուդ մէջ քու ամօթդ և իմ ոճիրս թաղէ։

Դոնիպոս. Հապա, հանդարտէ, իմ թագաւորս. անցած բաները յաւիտեան մոռցիր և ոչ քու վերքերդ ասանկ չար յիշատակներով զայրացուր։

Եբիսոդեմ. Սիրեցեալ Դոնիպոս, այս կուրծքին մէջ ես կրնամ խիղճերուս լռութիւն հրամայել. և թէ որ կրնամ ալ, պէտք է որ

1 Պամիսոս գետի մը անուն է։

ընեմ։ Ես քեզ կը տխրեցընեմ կը տեսնամ. բայց վերջացելոց, գիտես դուն, միշտ դժուարին է ընկերութիւնը։ Ներէ ինծի, թէ որ ուրիշ բանի վրայ խօսիս չես լսեր իմ թշուառութիւններէս զատ։ Կ'ախորժի սիրտը իր վերքերուն վրայ խօսիլ և իմ վերքերս կորսընցուցած որդւոցս յիշատակներն են։ Միտքդ կու դայ, միտքդ կու դայ Երգիան։

Դոնիպոս. Ա՜ հաղորդդ, ինչ օգուտ ունի։

Եբիսոդեմ. Կը յիշես դառնակսկիծ գիշերն որ անմեղը Նէմէոսի հաւատարիմ բաղկացը յանձնեցի։ Ասիկայ է տեղն, ասիկայ դուռը։ Դուն իմ քովս կը կենայիր, և տխուր՝ արցունք կը թափէիր։ Բարձրաձայն կը պոռար տխեղծ աղջիկը և չէր ուզեր իմ գիրկէս բաժնուիլ, և կու լար։ Մէջիդ առջևը չէ՞ն ասուիք, Դոնիպոս. ըսէ, չես յիշեր դուն։

Դոնիպոս. Այս ամէնն ալ կը յիշեմ, բայց հապա.....

Եբիսոդեմ. Կը կարծեմ որ զինք կը տեսնամ, կը կարծեմ որ ձայնը կը լսեմ։ Ո՛վ Աստուած. իրեք անգամ կեցայ որ յանձնեմ, և նոյն չափ անգամ կուրծքիս մօտեցուցի զինքը, և համբոյրներով ծածկեցի, վերջի՜ն համբոյրներով, և ներսէս գաղտուկ լացաւ սիրտս, չալ. գիսլուածին նախադուշակ. երանի՜ թէ ժամանակին օգուտ հանէի գաղտնի ազգարարութենէն։ Ասանկ մեռնելու գացած էիր ըլլար թշուառ աղջիկ, դեռ ողջ կ'ըլլայ.

իր, և քու ներկայութիւնդ աւելի անոյշ կ'ընէր ինձի կեանքը. և ոչ Սպարտուհւոյ մը դէմքին վրայ քու սիրելի կերպարանքդ դառնացընելու կու գար, տանջելու իմ մտածութիւնս։ Ըղձ, Գոնիպոս, դնա կատարէ իմ կամքս. երթայ Կեսիրան, երթայ, և թէ որ կարելի է՝ առանց զիս տեսնալու (ա)։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԿԵՍԻՐԱ. ԱՐԻՍՏՈԴԵՄ.

Կեսիրա. Առանց քեզ տեսնալու, և քու բերնէդ այսպիսի խիստ հրաման կ'ելլար։

Երիսոդեմ. Ինչու կու գաս դժբաղդի մը սիրոյն ճախող առարկան։ Աւելի աղէկ էր, որ երկուքնիս իրարմէ խոյս տայինք, և մեր աչքերէն յաւիտեան հեռացընէինք իրարու հանդիպելուն տխուր հաճոյքը։

Կեսիրա. Ո՞վ կրնար դիմանալ. ինչպէս իմ բարերարէս հեռու երթալ և չտեսնալ զինքը, շնորհակալ չըլլալ անոր, և չգանդատիլ անոր բաժանման դառնութեան վրայ, և մէկզմէկու վերջին բարևը չտալ։ Ընանկ քաղցրը են նաև վշտաց մէջ այս վայրկեանները, անանկ զուարճալի են.....

Երիսոդեմ. Ամէն զուարճութիւն ինձի

(ա) Երբոր մեկ խոսքն է երբոյ Գոնիպոս, մեկալ խոսքնէ գոսրա խա գայ Կեսիրա։

համար դադրած է. կը տեսնամ սա քարը. իմ խաղաղութիւնս, իմ սիրտս հոն մէջը փակուած է. և ինչ որ աւելի ցանկալի բան ունիմ աշխարհքիս վրայ և միանգամայն աւելի ահաւոր։

Կեսիրա. Այս քու տրտմութիւնդ չեմ արհամարհեր, վերհաղուն ցեր, բնութիւնը կ'ուզէ, արդար է. բայց զաւկներուն սիրական մոխիրին վրայ հայրերուն արցունքը յաւիտեան պիտի վազէ։

Երիսոդեմ. Յաւիտեանն ալ ինձի համար քիչ կու դայ. թող տուր որ թափեմ։ Արցունքը, ով աղջիկ, իմ վիճակիս կը պատշաճի։ Այս է մէկ հատիկ առաքինութիւնն որ ինձի մնաց. մէկ հատիկ սիրոփանքը, որ երկնից վրէժխնդիր բարկութիւնը ինձի թողուց։

Կեսիրա. Շատակ դատաստան տես։ Երկինքը քու վրադ բարի հօր, ինչպէս որ է, զար, բարի քաղաքացւոյ և բարի իշխողի առաքինութիւնը կը յարգէ։

Երիսոդեմ. Բարի հայր, բարի՞ քաղաքացի։

Կեսիրա. Այո՛ միթէ անանկ չէ՞, ով որ հայրենեաց վեհ սիրովը շարժած, յօժարութեամբ իր զաւակները հասարակաց պէտքին կը նուիրէ։

Երիսոդեմ. (Ո՞վ Աստուած, ինչ բաներ կը յիշէ։)

Կեսիրա. Այս դեռ նոյն ատենը իր հայրենի գրկէն բաժնած, քահանային մահահոտ

տապարին կու տայ ։

Եբիսոդորեմ . (Ա՜հ , որ ժանտը անոր բերանը կը դնէ այս գժնեայ խօսքերը ։)

Կեսիրա . Ո՞ւր լսուեցաւ աւելի արիական գործք , ուր դիւցազունը որ քեզի նմանի ։ Եւ ըսէ ինծի , միթէ զոհին ներկայ էիր ։

Եբիսոդորեմ . . . . . ։ Այո՛ , ներկայ էի ։

Կեսիրա . Այս տեսար միթէ , ձեռքերը կապուած մեռնելու երթալը ։

Եբիսոդորեմ . Լռէ , Կեսիրա , լռէ , ետ կեցիր ։ Քու ամէն մէկ խօսքդ սուր մ՚է , որ զիս կը խոցէ ։

Կեսիրա . Քեզ միսիթարէ , ուրեմն , քու առաքինութեանդ զգացմունքը , որ ժամանակին և բաղդին յաղթելով չկրնար մեռնիլ , և միանգամայն քեզ միսիթարէ հպատակաց սէրը , փառքը , թագաւորութիւնը ։

Եբիսոդորեմ . Ի՞նչ կ՚ըսես . թագաւորութիւնը . մարդկային թշուառութեանց ամենէն մեծն է ան ։ Ա՜հ , թէ որ կարենար մարդս դահին վրայ պսակած գերիին՝ հողուն տակէն հարցընել , կ՚իմանայիր որ երկինք շատ անգամ միայն պատժելու համար մեզի կը ղրկէ գաւազան մը և դահ մը ։

Կեսիրա . Ընդունական պսակը շատ անգամ նաև առաքինութեան վարձքն է . և անանկ ալ եղաւ երբոր քու մաղերդ պատեց ։

Եբիսոդորեմ . (Ա՜հ , կորենք այս խօսակցութիւնը , որ զիս կը սպաննէ ։) Ցափազանց , Կեսիրա , քու բարեմիտ դատմունքդ զիս կը պատուէ ։ Բայց դուն . . . . . զիս չէս ճանչ-

նար ։ Ընդ բաւ է , ես ալ , ես ալ գահի մը տէր եղայ , լաւ էր ինծի թէ որ բնաւ չըլլայի ։ Ո՜հ , բիւրեցս բիւր անգամ երանի՛ անոր , որ միայն իր անմեղ ընտանեաց վրայ թագաւորել կը հոգայ , և ուրիշ գահ չունի բաց ՚ի զաւակացը սիրտէն , քնութեան գահէն , և իմինէս աւելի տարբեր ։ Իմինս կը տեսնաս , սա քարն է ։ Թող , որ ես նստիմ հոս , լամ հոս , և գնա դուն յաջողութեամբ ։

Կեսիրա ։ Այս այս վիճակիս մէջ քեզ թողլու եմ , այս վիճակիս մէջ ։

Եբիսոդորեմ . Այս անոր արժանի եմ ։ Այսուհետև իրարմէ բաժնուելու ժամանակ է . ալ բնաւ մէկզմէկ տեսնալու չենք , բնաւ ։ Կու լաս դուն իմ աղջիկս Կեսիրա , կու լաս դուն ։ Բարեդութ երկինքը քու արցունքներդ վարձատրէ ։

Կեսիրա . Հիմա պիտի մեռնիմ ։

Եբիսոդորեմ . Ողջամբ մնա . . . . իմ կողմանէս բարևէ քու հայրդ . երջանիկ հայր . . . . և երբոր քեզի քու դիպուածներդ հարցընէ և կը տեսնաս զինք անկողնին մէկ կողմը ելլալ նստիլ , և լուռ մուռ և ուշադիր քու բերնէդ կախուիլ , պատմէ անոր թէ ինչպէս քեզ սիրեցի , և որչափ քաղցր կիրքերու նմանութիւնը մեր սիրտերը իրարու հետ շփոթեր էր ։ Իսկ անոր նաև Եբիստոդեմի դժնեայ և ցաւագին արկածները և քու պատմութիւնդ հառաչանքով մը , արցունքով մը ընդհատէ ։ Ողջամբ մնա , ուրեմն , Կեսիրա ։

Կեսիրա . Ա՜հ , ուր կ՚երթաս , կայնէ ,

դարձիր։

Երիսոդեմ. Այլ ինչ կ'ուզես ըսել ինծի։

Կեսիրա. Մի՛վ Աստուած, չեմ գիտեր. բայց հոս կեցիր կ'աղաչեմ քեզի։

Երիսոդեմ. Կեսիրա.

Կեսիրա. Երիսոդեմ։

Երիսոդեմ. Այս չեմ դիմանար։ Եկուր իմ գիրկս, ինծի փաթթուէ.... Ո՛վ հեշտութիւն, ո՛վ ամպատում գորովոյս։ Ես կ'իմանամ որ նոր չէ անիկայ իմ սրտիս. ուրիշ անգամ ալ ես զգացեր եմ։ Ո՛վ երկինք, դուն, արդեօք անիկայ իմ տանջանքներուս հետ կը խառնես, զանոնք կրկնապատկելու համար։ Դուն անգութ զիս կը խաբես, դուն զիս ծաղր կ'ընես։ Ա՛հ հեռու գնա, Կեսիրա, Տարտարոսի Ճիւաղ մըն էր, որ զիս զրգռեց քեզ գրկելու. հեռու գնա։

Կեսիրա. Հապա, մտիկ ըրէ ինծի։

Երիսոդեմ. Զդէ զիս։

Կեսիրա. Ինչ կատաղութիւն։

Երիսոդեմ. Փախիր։ Մէկ անողորմ աներևոյթ ձեռք մը մեր կուծքերուն մէջ կ'երկընայ, և մեզ հետ կը հրէ. հեռու, հեռու ինծմէ։

Կեսիրա. Մէկ վայրկեան մը միայն....

Երիսոդեմ. Ա՛լ ժամանակ չի կայ։ Ողջամբ մնա յաւիտեան, ողջամբ մնա։

Կեսիրա. Բայց կեցիր, բայց լսէ.....

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԿԵՍԻՐԱ.

Կեսիրա. Ինք խոյս կու տայ սատիկ վշտացած, և ես սիրտ պիտի ունենամ զանիկայ ձգելու. և այսչափ գութ.... և ասանկ սիրելի յիշատակներ.... Ա՛հ չէ, չեմ կրնար։ Եւ ո՞վ ես դուն քնաւ Երիսոդեմ, որ իմ սրտիս այսչափ մեծ մասը կը գրաւես, և ասանկ կը խռովես և կը շարժես։

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԼԻՍԱՆԴՐՈՍ. ՊԱԼԱՄԵԴԷՍ. ԿԵՍԻՐԱ.

Լիսանդրոս. Մենք ալ քեզ կը փնտռէինք Կեսիրա։ Ընդհան Ճամբայ ելլալու մեզ պատրաստ կը տեսնաս դուն, և միայն քեզի սպասելով կեցեր ենք։

Կեսիրա. Ա՛հ, ուշացրնենք, Լիսանդրոս, այս դառն Ճամբորդութիւնը։ Երիսոդեմ անանկ խորունկ ցաւի մէջ կը գտնուի, որ զիս ալ ողբրովին կը դողացընէ։ Անգթութիւն, ապերախտութիւն կ'ըլլայ զանիկայ թողուլը։ Ինքը զիս այնչափ կը սիրէր, և այնչափ բարերարութիւններով զիս լեցուց...

Լիսանդրոս. Այս Սպարտայէն հոս եկայ պատգամը բերելու համար։ Սպարտա անհամբեր անոր վախճանին կը սպասէ, և որ և իցէ դանդաղութիւն յանցանք կ'ըլլայ։ Դուն

կ'ուզես նէ, հոս կեցիր. հօրդ վրայ ես կը ցաւիմ, որ իր աղջկան դարձը չտեսնելով մեծ, անհուն կսկիծ պիտի ունենայ։

ՆԷՈՒՐԱ. Լաւ կը կարծես դուն։

ԼԻՍԱՆԴՐՈՍ. Ինքն անշուշտ նեղութենէն պիտի մեռնի։

ՆԷՈՒՐԱ. Հատ լաւ. յաղթէ, ուրեմն, հօր գութը։ Սակայն կը յուսամ որ Աստուածներն ալ Արիստոդեմի վրայ կ'ունենան և կը հսկեն անոր վրայ։

ՊԱԼԱՄԵԴԷՍ. (Արդ տես, բարեկամ, որչափ բարբարոս ես։)

ԼԻՍԱՆԴՐՈՍ. (Լռէ, միտքդ բեր քու խոստմունքդ. և ըրէ որ Սպարտա չգիտնայ այս քու տկարութիւնդ։)

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԴՈՆԻՊՊՈՍ. ԼԻՍԱՆԴՐՈՍ. ՊԱԼԱՄԵԴԷՍ. ՆԷՈՒՐԱ.

ԴՈՆԻՊՊՈՍ. Ընդունեցէք, ինծմէ, սիրելիք իմ, վերջին հրաժեշտս։ Դուն Պալամեդ և դուն Նէոիրա յիշեցէք Դոնիպպոսը, և ձեր միտքը դայ Արիստոդեմ, որուն վրայ շատ վախ ունիմ, որ շուտով սև լուր չառնէք։

ՆԷՈՒՐԱ. Մի ըսեր ասանկ։ Կը խնամէ զանիկայ երկինք, որ բարի թագաւորը և առաքինութիւնը կը պաշտպանէ։ Բայց ըսէ, ինչ կ'ընէ այն խեղճը, ինչ կը զբուցէ։

ԴՈՆԻՊՊՈՍ. Բան չի զբուցեր։ Ընդարձակ կը նստի թեւերը խաչաձև դրած. և մտածկոտ, խոռոված, տխուր, գետին կը տնկէ բացած աչքերը. և երբեմն երբեմն կը տեսնաս բիբերէն արցունքներ վար կաթիլ։ Եւ քիչ իբրև թէ խորունկ քունէ արթնցած յանկարծ ոտքի վրայ կը ցաթկէ և անկարգաբար ասդին անդին կը պտըտի, և մէյմը մէկ բանէն մէյմը մէկալին կը դպչի և կը զարնէ ձեռքով. և բան մը հարցընես նէ, կը նայի և պատասխան չի տար։

ՆԷՈՒՐԱ. Դուութս կը շարժի խեղճին վրայ։

ԴՈՆԻՊՊՈՍ. Այս ուզեցի այն ցնորմունքէն հանել զինքը, և բռնութեամբ առջևը կտրեցի, և ցնցեցի զինքը։ Ապշած հարցուց ինծի, թէ ով եմ, և ես ալ իրեն զբուցեցի և աչուընիս սրբելով կ'աղաչէի իրեն որ խաղաղի։ Ան ատենը զայրացած և դաժան. «Ընդդէն դնա, ողորմելի, պոռաց. մի խօսիր ինծի խաղաղութեան վրայ». և ասանկ ըսելով երեսը կը դարձընէր, և ձեռքով զիս ետ կը հրէր։ Բայց ես, անոր համար չձգեցի զինքը. հապա դեռ կը խրատէի և կը մխիթարէի. մինչև որ խելքը գլուխը գալով քիչ քիչ, թողութիւն խնդրեց ինծմէ և ինծի փաթթուեցաւ և բարեկամը զիս կանչեց, և աղցունքի գետով մը անհուն նեղութիւնը դուրս թափեց։ Երկուքնիս ալ կու լայինք։ Այս լացով սրտին վրայի սոսկալի բեռը թեթևցուց, և հիմակ աւելի հանդարտած կ'ե-

բնայ և կը հարցընէ թէ Կեսիրան Ճամբայ ելաւ արդեօք։ Կ'ուզէ գիտնալ. և զինք հանդ-
էցընելու համար է՝ որ ես հոս եկայ։

Կեոէրա. Ուրեմն դարձիր անոր, և զը-
րուցէ որ իմ Ճամբայ ելլալուս ակնատես է-
զար, և ուրչափ սուգով, գիտէ իմ սիրոս։
Զրուցէ անոր թէ ողջ կենայ և թէ աս բանիս
համար իր Կեսիրան կ'աղաչէ իրեն։ Զրուցէ
որ քաջապէս դէմ կենայ իր վշտացը, և Ը-
տուածոց բարութեանը ապաւինի։ Լա՛ դուն
Գոնիպպոս, դուն զանիկայ յանձնանձէ և քովը
կեցիր։ Քու սիրոյդ կը յանձնեմ զինքը։

Գոնիպպոս. Այս սիրտը շատ աւելի կը
զրուցէ ինծի անոր համար քան թէ քու շրթունք-
քդ. և ես, ես ինքն աղէկ կ'իմանամ։

Կեոէրա. Կը հաւատամ և կը հակընամ ի-
մինիս վրայ։ Այս ալ ըսէ անոր թէ զիս չմոռ-
նայ և թէ ես ալ անոր յիշատակը պիտի պա-
հեմ, քանի որ հոգին այս կուրծքը տաքցընէ։

Գոնիպպոս. Ամէն քու կամքդ հաւատար-
մութեամբ կը կատարեմ։

Կեոէրա. Մտիկ ըրէ։ Թէ որ հարցընէ
ինչպէս սգալից բաժնուեցայ, դուն որ կը
տեսնաս, դուն իմ տեղս զրուցէ։

Լիսանդրոս. Որչափ կը խօսուի այնչափ
աւելի տաժանաւոր կ'ըլլայ բաժնուիլը։

Կեոէրա. Ուրեմն..... երթանք։

Լիսանդրոս. Պալամեդէս։

Պալամեդէս. Հաւասիկ քեզի հետ եմ։
(Դեռ տարակոյսի մէջ եմ թէ լռելու եմ արդ-
եօք, չէնէ խոստմունքս լուծելու. խորհուրդ։)

ՏԵՍԱՐԱՆ Է.

ԳՈՆԻՊՊՈՍ. ԵՐԻՍՏՈԳԵՍ.

Գոնիպպոս. Ինչ աղուոր սիրտ, ինչ-
աղուոր հոգի։ Ո՛վ քաղցր ցոյցեր մարդկային
սիրոյն, անոյշ դիւթութիւն դժբաղդ հոգի-
ներու։... Ի Եհաղուն Տէր, վերջապէս Կե-
սիրա գնայ, և ոչ իրեն երթալը առանց շատ
ողբի և սուգի եղաւ։

Երիսոդեմ. Կը փափագէի որ գացած
չըլլար։ Մէկ մեծ գաղտնի պատճառ մը կ'ի-
մանայի. սրտիս մէջ անգամ մ'ալ զինք տես-
նալու և խօսելու հետը։ Բայց ասանկ ըլլայ։
—Գոնիպպոս, հոս ներսը մեծ պատերազմ
մը կ'ըլլայ։

Գոնիպպոս. Կը դադրի, յուսամ, երբք
կը դադրի. բայց մի ձգեր ինքզինքդ այնչափ
տկարանալ տխրութենէ։ Բռնադատէ ինք-
զինքդ, և հեռացընել ջանա ամէն սև մը-
տածութիւն։

Երիսոդեմ. Ասէ ինծի Գոնիպպոս, ինչ-
պէս կ'երևնայ քեզի իմ վիճակս, և միթէ ես
ճշմարտիւ դժբաղդ չեմ։

Գոնիպպոս. Ամէնքնիս ալ ենք, վեհա-
գունդ. ամէն մարդ իր ձախորդութիւններն
ունի։

Երիսոդեմ. Ինանկ է, ամէնքնիս ալ
դժբաղդ ենք, և ուրիշ աղէկ բան մը չունինք,
բայց եթէ մահը։

Գոնիպպոս. Ինչ։

Երիսոդեմ. Հապա, կայ ու կայ, մահը։ — Եւ միթէ կը հաւատաս դուն երբոր մահը ցաւալից կ'ըսեն։

Գոնիպպոս. Իմ թագաւորս, ինչ կը զրուցես։

Երիսոդեմ. Ցաւալից.... մանաւանդ թէ ես անոյշ կը կարծեմ երբոր վիշտերու վախճանն է։

Գոնիպպոս. Ա՜հ, ինչ կը խօսիս, ինչ կը յիմարաբանես։

Երիսոդեմ.... Մտիկ ըրէ Գոնիպպոս, ես կը վստահիմ քեզի, բայց մի թողուր որ տխրած տեսնամ քեզ։ Միայն այս օրս, այս օրս ալ.... և ետքը հողուն տակ։

Գոնիպպոս. Հողուն տակ. և ինչ կ'ուզես ըսել։ Ես խօսքով դուն իմ սիրտս ծակեցիր։

Երիսոդեմ. Բայց ինչու այսչափ կը վրշտանաս, իմ հաւատարիմս։ Հանդարտէ. ես չեմ ուզեր որ դուն լաս. ես չեմ արժանի քու արցունքներուդ։ Զգէ որ բոլոր իմ ճակատագիրս կատարուի, և թէ աստղ՝ որ անոր ճամբան կը ցուցնէր վերջապէս մարը մտնայ։ Պիտի գայ վաղը արևն, որ բարձրէն իմ մեծութիւնս կը լուսաւորէր, և պիտի վնտռէ զիս այս արքունեաց մէջ, և ուրիշ բան պիտի չտեսնայ բայց եթէ քարը, որ զիս կը ծածկէ։ Դուն ալ, Գոնիպպոս, ան պիտի տեսնաս։

Գոնիպպոս. Ա՜հ, դադրէ ինծի ասանկ զրուցելէն։ Հալածէ մտքէդ այս զարհուրելի

խենթութիւնը։

Երիսոդեմ. Չէ, քաղցը բարեկամ։ Խենթութիւն կ'ըլլայ կեանքի դիմանալը, երբոր գէշի փոխուեցաւ։

Գոնիպպոս. Ինչ որ ըլլայ, երկինքին պարգևն է։

Երիսոդեմ. Այս կը հրաժարիմ անկէ, երբոր զիս ապերջանիկ կ'ընէ։

Գոնիպպոս. Այս ոմ տուաւ քեզի այս իրաւունքը, ով արքայ։

Երիսոդեմ. Իմ թշուառութիւններս։

Գոնիպպոս. Համբերէ, արիաբար։

Երիսոդեմ. Այս համբերեցի անոնց քանի որ արիութիւնը անոնցմէ մեծ եղաւ, հիմայ պզտիկ է։ Ան ալիր չափն ունէր, ցաւոց յորդութիւնը յաղթեց անոր և ես կ'ընկճիմ։

Գոնիպպոս. Ուրեմն որոշեր ես։

Երիսոդեմ. Մեռնիլ։

Գոնիպպոս. Չես մտածեր որ Աստուածոց իրաւունքը կը յափշտակես, և յանցանք մ'ալ կ'աւելցնես առջինէն մեծ։

Երիսոդեմ. Դուն կը խօսիս, բարեկամ, դատարկ և հանդիստ սրտով և չես հասկրնար իմինիս լեցունութիւնը։ Դուն քու զաւակներուդ երակներուն մէջ սուրը չլսեցիր, դուն անոնց արիւնովը թագաւորութիւն մը չգտնեցիր։ Դուն չես դիտեր ինչպէս կը ծանրանայ թագ մը, երբ մեղքի մը գինն է։ Քու քունիդ դուն աներկիւղ կը քնանաս, և չես իմանար ահաւոր ձայներէ արթննալ. և չես տեսնար քու դիմացդ մէկ կատաղի ուրուա-

կան մը, որ քեզ կը հալածէ և քեզի կը դրդ-
չէ . . . . .

Դոնիպպոս . Եւ միթէ միշտ ուրուականի
մը վրայ խօսի՞լդ պիտի լսեմ։ Փարատէ անգամ
մը աս ունայն վախերը և լաւ տես։

Ըրիսոդեմ . Ունայն վախեր։ Ո՛վ,
թէ որ ուզեմ զրուցել քեզի որչափ անագորոյն է
քու մաղերդ տնկել կու տայի զարհուրելեդ,
և քու ճակատիդ վրայ իմ դէմքիս ահաբեկու-
թիւնը կ'անցնէր։

Դոնիպպոս . Բայց ինչ ոյժ կ'ուզես դուն,
որ բնութեան կարգերը կոտրտէ և սանդարա-
մետական պատնէշը, ուսկից դուրս հանել
մեռեալքը, և եղբը ինչու համար։

Ըրիսոդեմ . Որպէս զի դողան ողջերը։
Ես չեմ խաբուիր, ես զինք տեսայ ան . և այս
աչքերով . . . . այս ձեռքերով . . . . բայց զը-
րուցելը ինչ օգուտ ունի։ Շատ դժնդակ պատ-
մութիւն է։

Դոնիպպոս . Եւ կ'ուզես որ ես հաւա-
տամ . . . . .

Ըրիսոդեմ . Մի հաւատար, մի։ Ես ցը-
նորեցայ, երազ էր . մի հաւատար, մի։ Ո՛վ եր-
կիւղալի մռնիր, ո՛վ սև ուրուական, ո՛վ աղջիկ .
այդ շիրմին մէջ, այո՛, ես քու մեռեալդ կ'ինա-
նամ։ լաւ, կ'առնեմ քու բարկութիւնդ, լաւ . . .
Եւ դուն Դոնիպպոս . . . . կը լսես դուն անոր
ձայնը։ Ես աղէկ կը լսեմ և կը դողամ։

Դոնիպպոս . Տէր, ինչ ըսեմ ընաւ։ Քու
խօսքերդ անանկ Ճշմարտի և մեծութեան
կերպ մ' ունին որ զիս կը սառեցնեն։ Ու-

ուրականի մը իրաւ ընակարան է այդ շիրիմը։
Եւ դուն տեսար զինքը, և դուն լսեցիր ձայ-
նը, և ինչպէս ընաւ . հապա, պատմէ,
պատմէ ինծի բոլորը։

Ըրիսոդեմ . Շատ լաւ . ըլլայ ուրեմն
ասիկայ վերջին արհաւիրքը, որ իմ շրթունք-
քես կը լսես։ — Ինչպէս որ հիմայ դուն զիս
կը տեսնաս, ասանկ ես ալ կը տեսնամ ստէպ
իմ սպանուած աղջկանս ստուերը, և ո՜հ,
որչափ զարհուրելի . ան ատենն որ բոլոր բա-
ները կը քնանան, և ես միայն կը տքնիմ և կը
նստիմ դիշերային լուսոյն աղօտ փայլմամբը .
ահա յանկարծակի լոյսը կը դեղնի, և աչքս
վերցնելու ատեն ահա ուրուականն որ իմ դի-
մացս կը կենայ, և դուռը կը դրաւէ սպառնա-
լից և հսկայաձև։ Ինքը դերեզմանական զգես-
տով պատած է . նոյն ան զգեստով որով ծած-
կուած էր Դիրկէ շիրիմը դրուած օրը։ Իրեն
աղտով և արիւնով իրարու կպած մաղերը ընդ-
հակառակն երեսին վրայ կ'ինկան, և ծած-
կելոշնին ան, աւելի սոսկալի կ'ընեն։ Զար-
հուրած ետ ետ կ'երթամ և պոռալով ուրիշ
տեղ երեսս կը դարձընեմ, և քովս նստած կը
տեսնամ զինքը։ Աչքերը տնկած ինծի կը նայի
և անշարժ կը կենայ և բան մը չի զրուցեր։
Նոքը երեսին մէկ դի ընելով մաղերը, արիւն-
թաթախ զգեստներն կը քանայ և կը ցուցընէ
ինծի, ո՛վ տեսիլ, պատռուած գիրկը, դեռ
սև նեխութիւն վաղցնող և գարշելի։ Ես ետ
կը հրեմ զինքը, բայց ինքը աւելի զօրաւոր
կը վանէ զիս, և կուրծքովս ու բազուկներով

զիս կը ձնշէ։ Ան ատեն կը զգամ ձեռքիս տակ գաղջ և կտրտած աղիքները դողդղալ. և այս դպչիլը սոսկումով մազերս կը անկէ։ Կը ջանամ փախչիլ, բայց ուրուականը կը բռնէ զիս կողերէս և կը քաշէ այդ շիրիմին ոտքը, և «Հոս քեզի կը սպասեմ» կը պոռայ, և այս ըսելով կ'անհետանայ։

Դոնիպոս. Կը սարսափիմ։ Թէ ճշմարիտ ըլլայ սքանչելիքը, թէ վշտացեալ, մաղձոտ մտքի գործք և խաբէութիւն, քեզի կարեկից կ'ըլլամ իմ թագաւորս։ Ընչուշտ դուն շատ պիտի նեղիս անկէ, բայց յուսահատիլը վատութիւն կ'ըլլայ։ Ընդդդուելիութիւնը ամէն ճախորդութեան յաղթականն է։ Ժամանակը, հեռակայութիւնը կը նան անհետ ընել քու ոգիներուդ խռովութիւնն ու տխրութիւնը։ Թող աս տեղերս, ուր այնչափ առարկաներէ մնած է քու կսկիծդդ։ Բոլոր Հելլենատան ժուռ դանք, այց ելլանք քաղաքներու, տեսնանք անոնց սովորութիւնները։ Հազար կերպով քեզ կը զբաղեցնես, քեզ կը ցրուես . . . . ինչ կը մտմտաս, վայ ինծի, ինչ կը ջանաս, անխոհեմ։

Երիսոդեմ. Այս ինքն մնալ հոդ մէջը։

Դոնիպոս. Այդ գերեզմանը. ով աստեղք. կեցիր, ինչ վախճանաս։

Երիսոդեմ. Խորհրդակցելու այն ստուերին հետ, կամ անիկայ ամոքելու կամ մեռնելու։

Դոնիպոս. Տէր, կայնէ. իմ թագաւորս

ուրս կը պաղատիմ քեզի։

Երիսոդեմ. Այս ինչ բանէ կը վախնաս։

Դոնիպոս. Ամէն քուկին երևակայութենէդ։ Դարձիր, փոխէ դիտաւորութիւնդ։

Երիսոդեմ. Ի՞նչ յուսար։

Դոնիպոս. Հապա, ըսէ ինծի, (վայ ինծի) բայց թէ որ երբեք անիկայ ուրուականի մը բնակարան է . . . . .

Երիսոդեմ. Այս երկայն ատենէ 'ի վեր արդէն վարժած եմ զինքը տեսնալու։

Դոնիպոս. Այս ինչ կը ցանկաս։

Երիսոդեմ. Խօսիլ անոր հետ։

Դոնիպոս. Ա՜հ մի, մի փորձեր ան։

Երիսոդեմ. Թող, ուրչափ գէշ բան կըլլայ ինծի հանդիպի. ես կ'ուզեմ հարցնել այն ստուերին։ Պատճառը պիտի փնտռեմ անկէ, ինչու յանցանք մը թողութիւն չի գտնար այնչափ զիրջերէ վերջը։ Իր միտքը հասկընալ ինծի պէտք է, ինչ կը հրամնէ երկինք. ինչ կ'ուզեն ինծմէ։

Դոնիպոս. Ո՞տիկ ըրէ ինծի. ով Աստուած, ինչ սոսկալի խորհուրդ։

Երիսոդեմ. Ալ ձգէ զիս, ազատ ձամբայ տուր ինծի. ես քեզի կը հրամայեմ։

Դոնիպոս. Բայց մտիկ ըրէ, կաղաչեմ։ Որովհետև անդարձ ես կամքիդ մէջ, միայն մէկ շնորհք մը կը թախանձեմ, և ոտքդ էյնալով կը թախանձեմ։

Երիսոդեմ. Խօսէ, ինչ կը փափագիս։

Դոնիպոս. Տէր . . . . այդ սուրը որ կուղիդ վրայ կը ծածկես . . . . . .

Episkoposen. Շատ լաւ։

Պոնիպոս. Այդ սուրդ-քեզմէ կը խնդրեմ։

Episkoposen.... Այո, դեռ իմ ատենս հասած չէ. առ, տիրասէր ծառայ, այդչափ գոհով սրտիս կը զարնէ։ Գրէկ զիս, և այս սիրոյ գրաւականը այնպիսի գեղեցիկ հաւատարմութիւնը փոխարինէ (*)։

ՎԱՐԱԳՈՅՐ ՉՈՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԿԵՍԻՐԱ ԾԱՂԿԷ ՊՍԱԿՈՎ. ԱՐԻՍՏՈԴԵՄ ՀԻՐՄԻՆ ՄԷՋԸ.

Կեսէրա. Ինչուշտ բարեկամ Ստուած մը եղաւ, որ Պալամեդէսի գլխուն արգելք մը բացաւ Համլայ ելլալու։ Օգուտ քաղեմ անկէ, այս ինծի սիրելի տեղուանքը նորէն տեսնալով։ Եւ քիչ մը առաջ հոս ձգեցի վերջտագնեալ Episտոդեմը, և գուցէ կը դառնայ հոս։ Սակայն այս ծաղկէ պսակը իմ սովորական հանապազօրեայ հարկս այդ շիրմին կախեմ։ Ընդունէ այս սիրոյս նշանը պատուական ստուեր։ Ո՛վ Դիրկէ, ահ ինչո՞ւ դեռ չես

(*) Գերեզմանին մէջ կը մտնայ։

տպրիր։ Ես քեզ շատ պիտի սիրէի. և դուն Կեսիրայի բարեկամը, ընկերը, քոյրը պիտի ըլլայիր։ Բայց թէպէտ և վախճանած ես, քեզ կը սիրեմ. միշտ սրբազան և լեղի պիտի ըլլայ ինծի Դիրկէի յիշատակը..... վայ ինծի, ինչ դղրդմունք կը լսուի ներսէն.... ինչ ողբեր և ճիչեր։

Episkoposen. Ձգէ զիս, սոսկալի ուրուական (*)։

Կեսէրա. Ո՛վ Episտուած. Episտոդեմի ձայնը կ'երևնայ ինծի։ Ո՛վ սուրբ Դէք, նը-պաստ, օգնութիւն։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱՐԻՍՏՈԴԵՄ ՈՐ ՍԱՍՏԿՈՒԹԵԱՄԲ ԴՈՒՐՍ Կ'ԵԼԼԱՑԵՒ ԹԱՏԵՐ ԱՌԱՋԻՆ ՎՐԱՑ ԱՆԶԳԱՑ ԿԻՑՆԱՑ. ՈՒ ԿԵՍԻՐԱ.

Episkoposen. Ձգէ զիս. աներևութայիր. գթութիւն, անողորմ, գթութիւն։

Կեսէրա. Ո՞ւր պահուըտիմ, ո՛վ թշուառութեանս..... ոչ անոր կրնամ նայիլ, ոչ պոռալ, ոչ փախչիլ։ Ո՛վ ինծի խորհուրդ կու տայ. ինչ պէտք է ընեմ. օգնեցէք ա-նոր.... Ո՜հ, բոլոր մահուան դեղնութիւնով ծածկուեր է. ինչպէս քրտինք կը վազ-

(*) Շիրդն մէջէն

ցընէ Ճակատը և իր մազերը տնկուեր են։ Իր կերպարանքը սարսափով զիս կը լեցընէ։ Ըրիստոդեմ, Ըրիստոդեմ չէս լսեր ինծի։

Ըրիսոդեմ. Փախիր, հեռու փնա, մի մօտենար ինծի նզովեալ ստուերը։

Եսիրա. Բաց աչքերդ, ինծի նայէ, ես եմ քեզ կանչողը, վերհազունդ։

Ըրիսոդեմ. Ի՞նչ... պահուրտեցա՛ւ... ուր փնաց. ո՛վ ազատեց զիս այն անողորմին բարկութենէն։

Եսիրա. Ողոմն վրայ կը խօսիս, Տէր. ինչո՛ւ չորս դին կը նայիս։

Ըրիսոդեմ. Մի՛թէ չտեսար դուն, չի՛ լսեցի՞ր։

Եսիրա. Ողոմն քնաւ։ Ես քեզի մտիկ ընելով քոլորովին կը դողամ։

Ըրիսոդեմ. Իսկ դուն ո՛վ ես, որ մարդասիրաբար ինծի օգնութեան կը հասնիս։ Թէ որ երկնքի Աստուած մըն ես, հապա, յայտնէ քեզ։ Որու ոտքդ կ'ինկնամ քեզ պաշտելու համար։

Կեսիրա. Ո՛վ Աստուած. ինչ կ'ընես, չէս տեսնար զիս, ես Կեսիրան եմ։

Ըրիսոդեմ. Ո՞վ է Կեսիրա։

Կեսիրա. (Այ թշուառութեանս, բոլոր Ճանաչողութիւնը կորսընցուցեր է։) Իմ դէմքս չէս Ճանչնար։

Ըրիսոդեմ. Սրտիս մէջ դրոշմած եմ... սիրտս ինծի կը զրուցէ.... և քողը մէկ դի կ'առնէ։ Իմ մխիթարիչս, ո՛վ քեզ այս բազկացս մէջ կը դարձընէ։ Ո՜հ, ձգէ ինծի իմ

արցունքներս քուկինեերուդ հետ խառնել. նեղութենէս սիրտս կը Ճաթի, թէ որ լացը ինծի չօգնէ։

Կեսիրա. Այ, թափէ քոլորն ալ այս գրկիս մէջ։ Ձես գտնար ուրիշ մը, որ աւելի դթութեամբ և սիրով զգածուած ըլլայ։ — Որու շրթունքիդ այնպիսի խօսքեր ելլալ լսեցի, որ զիս սասանեցուցին։ Ի՞նչ է ուրեմն, այս անդութ ուրուականը, որ քեզ կը հալածէ։

Ըրիսոդեմ. Ինոմեղ մը, որ կը հալածէ անզգամ մը։

Կեսիրա. Իսկ այս անզգամը։

Ըրիսոդեմ. Ես եմ։

Կեսիրա. Դուն։ Ինչո՞ւ կ'ուզես որ քեզ ասանկ յանցաւոր կարծեմ։

Ըրիսոդեմ. Ինչու որ ես սպաննեցի ան։

Կեսիրա. Ո՞վ սպաննեցիր։

Ըրիսոդեմ. Իմ աղջիկս։

Կեսիրա. (Ո՛վ երկինք, խելքը գլխէն գացեր է։ Եւ ո՞ր խենթութիւնը զինք գրգռեց հոդ ներսը ոտք կոխելու։ Ողորմած Դիք, եթէ ողորմած կոչուիլը ձեզի հաճոյ է, հապա շնորհեցէք ասոր կորսընցուցած խելքը, հապա ձեր գութը շարժէ։) Տէր, դուն կը դողաս։ Ի՞նչ կը դիտես ասանկ աչքերդ տնկած։

Ըրիսոդեմ. Կը դառնայ, ան է. չէս տեսնար։ Ա՜հ, պաշտպանէ զիս, ծածկէ զիս, կ'աղաչեմ, իր աչքէն։

Կեսիրա. Դուն կը ցնորիս։ Ես ուրիշ

բան չեմ տեսնար , այդ գերեզմանէն զատ ։

Երիսոդորոս . Այսպէս անոր , շիտակ և կատարեալ կեցեր է բաց սեմոցը վրայ ։ Այսպէս . աչքերը անշարժ իմ վրաս մնկեր է և կը մտրնչայ ։ Ո՜հ , ցածիր , անգութ ։ Թէ որ իմ աղջկանս ստուերն ես դուն , ինչու՞ ասանկ վախնալու ձևեր առիր ։ Եւ ո՞վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը , չարչարելու հայրդ և բնութիւնը ։ Ինք լուռ կը կենայ . ետ կը դառնայ , և աներևոյթ կ՚ըլլայ ինծմէ ։ Ո՜հ , ո՛րչափ դժնեայ և սոսկալի է ։

Կեսիրա . Այս ալ հիմայ իրաւ որ կ՚իմանամ երակներուս մէջէն վախի սարսուռը քալել ։ Այս , բան մը՝ չէ , Աշմարտիւ բան մը չտեսայ . բայց այդ լսուած տկար հեծութիւնը , լուռ արհաւիրքը որ բաց գերեզմանէն կու գայ . քու խօսքերդ քու երեսիդ դեղնութիւնը , և ամէն բանէ աւելի աղմուկը , որ հոգիս կը հանէ , թող չէն տար ինծի տարակուսիլ , որ այդ սոսկալի ուրուականը հոնները բնակի ։ Բայց ինչու՞ տեսանելի կ՚ըլլայ քու աչքիդ , և իմինէս կը ծածկուի ։

Երիսոդորոս . Պնդեղ ես դուն ։ Քու աչքերդ չէն կրնար տեսնալ դաղտնիքները, որոնք Աստուածոց բարկութիւնը չարագործաց կը յայտնէ զիրենք սարսեցընելու համար ։ Դուն մայրենի կողին արիւնը չթափեցիր . և ոչ քեզ կը դատապարտէ բնութեան աղաղակը ։

Կեսիրա . Բայց ուրեմն Աշմարիտ է , որ դուն մեղապարտ ես ։

Երիսոդորոս . Պ՚Ռեզն զուցեցի . բայց ասկէց անդին մի ուզեր հարցընել . և փախիր ինծմէ , կ՚աղաչեմ քեզի , և թող տուր զիս ։

Կեսիրա . Թէ ես քեզ թողնեմ ։ Ո՜հ , էն , ինչ որ ալ ըլլայ քու չարագործութիւնդ՝ իմ սրտիս մէջ գրուած է քու չատագովութիւնդ ։

Երիսոդորոս . Երկինքն ալ գրուած է իմ դատապարտութիւնս , և գրեց հոն անմեղի մը արիւնը ։

Կեսիրա . Այս ինչ , ՏԷր , միթէ մեռեալք ներումն չէն Ճանչնար ։

Երիսոդորոս . Գերեզմանէն անդին ներելու բովանդակ իրաւունքը իրենց միայն պահեցին Աստուածները ։ Այս թէ որ դուն ինքն իմ աղջիկս ըլլայիր , թէ որ ամբարիշտ նպատակներու համար քեզ կտոր կտոր ըրած ըլլայի , ա՜հ , ըսէ ինծի , քու գաղան սատակչիդ կը ներէիր դուն ան ատենը , գթած ստուեր ։ Ըսէ Կեսիրա , կը ներէիր ։

Կեսիրա . Ա՜հ , լռէ ։

Երիսոդորոս . Այս ետքը կարծես թէ երկինք կը հաւանի ։

Կեսիրա . Այս միթէ երկինք կը թողու՞ որդւոց հոգ ներուն ասանկ երկայն քէն հայրերնուն դէմ , և ասանկ անողորմ վրէժխնդրութիւն ։

Երիսոդորոս . Պնաչառ , անհասանելի , խորին են վերնական վճիռները և ոչ արժան է մահկանացու աչքերու անոնց մութը թափանցել ։ Թերևս երկինք սահմանեց , որ իմ տան-

ջանքս ուրիշին օրինակ ըլլայ , որով ամէն հայը սորվի բնութենէ ակնածել և վախնալ : Հա-
ւատա իմ խօսքիս , շատ վերադ է ան , երբոր կ'անարգուի : Ընանց պատժի հօր անունը կը-
ըսել չըլլար . և շուտ կամ ուշ , ով որ ա-
նոր պարտքէն կը պակսի , կը զղջայ և կու լայ :

Կեսէրա . Իսկ դուն լացիր : Հիմա ժա-
մանակ է ալ աչքերդ սրբելու և ներկայ Ս-
տուածներէն քու զղջմանդ պտուղը թախան-
ձելու : Սիրտ առ , Տէր : Մեղք չկայ որ քա-
ւելի չըլլայ : Այդ զայրացած ստուերը հաշտե-
ցընել Լանա Ջերմեռանդ խնկերով և ընտրելա-
զոյն զոհերով :

Երիսոդորոս . . . Շատ լաւ . . . ընեմ . . .
զոհն արդէն պատրաստ է :

Կեսէրա . Սուրբ գործքին կ'ուզեմ քեզի
հետ ըլլալ :

Երիսոդորոս . Ոչ , փոյթ մի ունենար ա-
կանատես ըլլալու , ես քեզի խորհուրդ կու տամ :

Կեսէրա . Մանաւանդ թէ կ'ուզեմ ես ին-
քըն պակել զոհը ծաղկներով և աղօթքներ
ընել , որով փոխուի քու վիճակդ :

Երիսոդորոս . Ալ փոխուի , յուսամ , կը
փոխուի :

Կեսէրա . Ինաւ մի տարակուսիր անոր
վրայ : Զարիք իրենց չափն ունին : Երկնքին
գթութիւնը շատ անգամ կ'ուշանայ , բայց ոչ
երբեք կը պակսի : Իսկ քեզի ամենեին չպակ-
սիր , որ քու զղջումդդ բոլոր . . . (Ալ ինծի
մոռիկ չըներ , և աչքերը գետին տնկեր է , և

ոչ իսկ արտեւանունքը կը շարժէ , և դրօշեալ
կը նմանի : Երդեօք ինչ կը մտածէ :)

Երիսոդորոս . (Ոչ ալ , աս է Ճամբան .
վայրկեան մը , և եղբը կը քնանանք . . . . .)
որոշեցի արդէն :

Կեսէրա . Որոշեցիր արդէն , և ինչ . . .
խօսէ :

Երիսոդորոս . Ուրիշ բան չէ , բայց մի-
այն իմ խաղաղութիւնս :

Կեսէրա . Դու ասանկ խռոված կ'ըսես :

Երիսոդորոս . Ոչ , հանդարտ եմ . չես
տեսնար , բոլորովին հանդարտ եմ :

Կեսէրա . Ա՜հ , այս հանդարտութիւնը
աւելի զիս կը զարհուրեցընէ , քան թէ առա-
ջուան կատաղութիւնը : Կաղաչեմ . . . .
(ինծի ուշ չի դներ , և ինչ բնաւ կը փնտռէ
կրկնոցին տակ : Ոչիչ մը չունիմ որ չդողայ :)

Երիսոդորոս . (Ուրիշ մը գտնամ , ինչ որ
ըլլայ ինծի կը ծառայէ :)

Կեսէրա . Հապա , կայնէ , կայնէ մ'երթաը : Ոտքդ ինկած կը պաղատիմ քեզի . մը-
տիկ ըրէ ինծի , մէկ դի դիր սոսկալի խոր-
հուրդդ :

Երիսոդորոս . Դու ինչ խորհուրդ կ'երևա-
կայես :

Կեսէրա . Հապա ինայէ ինծի զան իկայ
բերանս առնելու արհաւիրքը : Ես կը տես-
նամ արդէն և սարսափէս կը սառիմ :

Երիսոդորոս . Իմ վրաս տխուր բան մի
վախնար : Ապահովցընէ քեզ այս ծիծաղը :

Կեսէրա . Այդ ծիծաղը չկարծածէդ ա-

ելի ահռելի է, և ան ալ կը զարհուրեցընէ զիս։ Չէ, քու մոռծութիւններդ անմեղ չեն։ Հապա, փոխէ զանոնք, վերհազուն Տէր, մի փախչիր ինծմէ։ Կայէ, ես եմ որ կ'աղաչեմ.... (Ո՛վ Աստուած, չի լսեր ինծի, անզգայ դարձաւ.... Ա՜հ իմ բանս լմնցաւ.) կայնէ, մտիկ ըրէ, ես կ'ուզեմ ետևէդ գալ.... (ա) Վա՜յ թշուառիս։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԿԵՍԻՐԱ. ԳՈՆԻՊՊՈՍ.

Կեսիրա. Բանկ զիս կ'արդելո՞ւ։ Սարսափեցուց զիս այն ակնարկութիւնը և այն նայուածքը։ Ա՜հ, վառք երկնից, Գոնիպպոս Աստուած մը քեզ հոս կը զրկէ։ Արիստոդեմ ինք զինք կորսընցուցեր է. ա՜հ, վաղէ, թռիր, փրկէ զինք կատաղութենէն, որ խելքը գլխէն կը տանի (բ)։

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԿԵՍԻՐԱ.

Կեսիրա. Զգնական եղէք անոր, ով Աստուածներ։ Ո՜հ, ինչ ահաւոր աղմուկ

(ա) Արիսպոդեմ սպառնալիս հերոսվ ի՛ր հրամայէ անոր իր եղբէն լիգալու ի՛երթայ։

(բ) Գոնիպպոս Արիսպոդեմի եղբէն ի՛երթայ։

կիրքերու։ Ալ ես չեմ իմանար թէ ուր եմ։ Յաղու զիս կը ստիպէ չեմ գիտեր ինչ բռնութիւն մը, և լալ չեմ կրնար։ Եւ հոգւոյս խորունկէն ձայն մը շշընկոց կը հանէ, և ոչ կրնամ զրուցել թէ ինչ կ'ըսէ, ոչ թէ յուսալ և ոչ թէ վախնալ։ Կստինք։ Ընանկ այլայլած եմ, որ ոտուրներս չի բռներ։

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԵՒՄԷՈՍ. ԿԵՍԻՐԱ.

Եւմէոս. Ահաւասիկ, Եւմէոս, Մեսսինայի մէջն ես։ Ո՜հ ինչպէս Սպարտայէն հոս ուժս կտրած և յոգնած հասայ. բայց վերջապէս հասայ հոս։ Բազմագութ Աստուածներ ձեզի գոհութիւն կու տամ, որ զիս Սպարտայի ծառայութենէն հանեցիք և շղթաները կտրտեցիք, որ դրեթէ բոլոր իմ կեանքս մաշեցուցին։ Ո՜րչափ ինծի անոյշ է հիմայ ազատութիւնը։ Կը տեսնամ նորէն հայրենիքս և այս անձկակարօտ պարիսպները և խառն ուրախութեամբ սիրտս վեր կը ցաթկէ։ Միայն քու վրադ կը ցաւիմ Արիստոդեմ. ես կու գամ նոր ողբ-քեզի բերելու։ Եւմէոսը պիտի տեսնաս, բայց պիտի չտեսնաս քու աղջիկդ։ Երկինք չուզեց, որ ես ազատեմ քեզի քու սիրական Արգիադ, և ուրիշ կերպ կարգադրեց։ Արդ ո՛վ զիս թագաւորին դիմացը կը տանի։ Մարդ մը չեմ գտնար հոս որ զիս ճանչնայ, և չորս դիս բոլոր աղքունիքը

պարպուած կ'երևնայ։ Այս կողմէն առաջ երթամ։

ԿԵՍԷՐՈ. Ո՞վ կու գայ։ Ո՜հ, ներե՛ք, բարի ծերունիդ, ինչ կ'ուզես։

ԻՍԴՈՍ. Թագաւորին հետ, ազնիւ օրիորդ, կ'ուզէի խօսիլ։ Ընանկ եմ, որ իրեն շատ ցանկալի պիտի ըլլայ զիս տեսնալը։

ԿԵՍԷՐՈ. Շատ գէշ ժամանակ ընտրեցիր։ Մեծ ցաւով զգածուած թագաւորը ամէն աչքէ կը ծածկուի, և անկարելի բան մըն է անոր հետ խօսիլը։ Բայց թէ որ իմ հարցմունքս ամբարտաւան չէ, զրուցէ ինծի ովքեր։

ԻՍԴՈՍ. Լսեմ երբեք Եւմէոսի անունը քու ականջիդ դպաւ նէ, ես ան եմ։

ԿԵՍԷՐՈ. Եւմէոս. հզօ՛ր Դիք, և ո՞ւրուն ծանօթ չէ Եւմէոս. ո՞վ չի գիտեր որ Ընիստոդեմքեզ Ընդոս զրկեր էր, որպէս զի անվտանգ հոն տանիս իր պզտիկ աղջիկը Ընդիան։ Բայց հոս ձայն եկած էր, որ աղջիկան հետ մէկտեղ Լատոնի բերնէն մօտ կտոր կտոր ըրած էր քեզ Սպարտացի դունդ մը։ Այս բանիս հաւատաց թագաւորն ալ, և ան ատենէն 'ի վեր լացաւ, և դեռ կու լայ իր աղջիկը։

ԻՍԴՈՍ. Թէ ողջ է խեղճը, և ո՞ւր և ինչպէս չեմ կրնար հաստատել։ Բայց թէ որ թշնամին իմ կենացս ներեց նէ, հաստատ կը հաւատամ որ Ընդիայի կենացն ալ խնայած պիտի ըլլայ, մանաւանդ գիտեր նէ թէ, ո՞րչափ և ինչպիսի գին ունէր ան։

ԿԵՍԷՐՈ. Իսկ դուն ինչպէս ուրեմն մա-

հուանէ խալըսեցար։ Ի՞նչպէս կը դառնաս։

ԻՍԴՈՍ. Խորունկ աշտարակի մը մէջ զիս փակեցին և իրենք գիտեն, իրենք ան բարբարոսները ինչ վախճանաւ ասանկ ծանր թըշուառ կեանք ինծի թողուցին։ Ընդատելու ամէն մտածութիւն մինչև փափագն ալ արդէն կորսընցուցեր էի, բաց 'ի սրտիս կենդանի ծածուկ շարժմունքէն որ միշտ կը յիշեցներ ինծի հայրենի սիրական հողերը, և զուարճալի գամիսոսին երջանիկ ափունքը, և տխուր ամնոյշ յիշատակին վրայ շատ անգամ հառաչել կու տար. ուստի յուսացի որ վերջապէս մահը գթալից՝ իմ երկայն նեղութենէս զիս պիտի ազատէր. երբոր յանկարծ բանտիս դռները բացուիլ տեսայ, և լսեցի թէ խաղաղութիւնը մեր և Սպարտացւոց մէջ վերջ պիտի տար հին ատելութեան և պատերազմական փնտռտուքն. և թէ նոյն ատենը Լակոնացւոց մէջ մեծերէն մէկը իմ դէսպէրս գիտնալով և իմ նեղութեանցս վրայ գթալով ժամանակէն առաջ ինծի համար ազատութիւն ձեռք ձգեր էր։ Ուստի մէկէն անոր շտկուեցայ երթալու, ամէն պարտուց առաջինը երախտագիտութիւնն ըլլալով։ Ոտեր մը գտայ յարգելի կերպարանքով, և արդէն մեռնելու մօտ էր։ Իմ դիմացս ելաւ իր տկար կողերը հանելով անկողինէն, և գրկեց զիս լալով և կ'ըսէ. «Եւմէոս, մի փնտռեր պատճառը, որ քու շղթաներդ ինծի քակել տուաւ, քեզի յայտնի կ'ըլլայ երբոր Մեսսինա հասնիս։ Հոն մէկէն խոյզ և խնդիր ընէս օրիորդի մը Կեսիրա անուն»։

Կեսիրա. Ո՛վ երկինք, Կեսիրա։

Նոմիոս. Այո՛, և «Ես անոր կու տաս» զրուցեց, և հանեց մէկ թուղթ մը և դողդոջուն ձեռքով ինծի յանձնեց։

Կեսիրա. Հապա ըսէ ինծի, կ'աղաչեմ, ըսէ ինծի անոր անունը։

Նոմիոս. Տալտիբիոս։

Կեսիրա. Ո՛վ աստեղք. Տալտիբիոս, ինչ կ'ըսես բնաւ, Տալտիբիոս։

Նոմիոս. Մի թէ քեզի ծանօ՞թ էր։

Կեսիրա. Իմ հայրս է, և ես ան Կեսիրան՝ որ քեզի վնասուել հրամմեց։

Նոմիոս. Շատ լաւ.... թէ որ դուն ան ես.... ահա՝ քեզի թուղթը որ Տալտիբիոս ինծի տուաւ։

Կեսիրա. Տուր. — «Կեսիրա, երբոր կարդաս աս նամակը մահն արդէն իմ օրերս կարճեցուցած կ'ըլլայ։ Մեռնելիս առաջ մեծ գաղտնիք կը յայտնեմ քեզի։ Քեզի բնաւ հայր եղած չեմ, բայց եթէ սիրով. Լիսանդրոս միայն կրնայ քու ճշմարիտ հօրդ անունը տալ։ Ինքը գիտէ, և ծածկէ նէ միայն անոր համար է ինչու որ նեղսէն կ'ատէ զանիկայ և քեզ կը նենդէ։ Ողջամբ մնա։ Ուսկեց անդին զրուցելը երդմունք մը կ'արգելու, բայց չի ստեր Տալտիբիոս»։ — Ո՞ւր եմ ես, ինչ է կարդացածս։

Նոմիոս. Հիմայ կ'իմանամ, ով աղջիկ, ինչու Տալտիբիոս մեռնելու ատենը կը գոչէր. Երանի՜ թէ խաբած չըլլայի անմեղ մը, և արցունքը երեսներէն վար կը վազէր։

Կեսիրա. «Ինքը գիտէ, և ծածկէ նէ միայն անոր համար է, ինչու որ նեղսէ՛ սանց կ'ատէ զանիկայ և քեզ կը նենդէ»։ Եւ զիս կը նենդէ. վա՛յ անզգամ։ Ես ամ բարեշտին եսեւէն վազէնք։

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԼԻՍԱՆԴՐՈՍ. ՊԱԼԱՄԵԴԷՍ. ԿԵՍԻՐԱ.

ՆԻՄԻՈՍ.

Կեսիրա. Յամանակին կու գաս, կարդա։

Նոմիոս. (Այդ դէմքը ես ուրիշ տեղ ալ տեսած եմ անշուշտ։ Ով իմ մտածութիւնս օգնէ ինծի, որ կարենամ յիշել։)

Լիսանդրոս. Սուտզրուց է աս թուղթը և Տալտիբիոս ցնդեր է։

Կեսիրա. Տալտիբիոս ցնդէ՞ր է, նենգաւոր. սուտ կ'ըսես. այս գրուածքը ցընդած մարդու չէ։

Նոմիոս. Չէ, չեմ խաբուիր անիկայ է։ Ո՛վ արդար երկինք։ Զգէ, որ ես խօսիմ։ Այս դէմքիս վրայ տնկէ աչքդ. կը ճանչնաս։

Լիսանդրոս. Չէ, նոր չերևնար ինծի, բայց միտքս չի գար, ով ծեր։

Նոմիոս. Եւ չես յիշեր Լատնի քեռանը՝, յափշտակած աղջի՛կը։

Լիսանդրոս. (Հիմա կը ճանչնամ, բայց ինչպէս ողջ է հա։)

Նոմէոս. Այլ է, ես ան եմ, ուսկից յատիշտակեցիր։

Սէսիրա. Եւ որոն վրայ կը խօսիս։

Նոմէոս. Արգիային վրայ կը խօսիմ. ասիկայ է իմ ձեռքիս առնողը։

Պալամէդէս. Ազէ, բարեկամ, խօսէ, ապա թէ ոչ ես ինքն կը յայտնեմ բոլորը։

Նոմէոս. Պատասխան տուր, ըսէ ինծի. ինչ հանդիպեցաւ այն դժբաղդին։

Լիսանդրոս. Փուռ է կեղծելը։ Ձէ ալ։ Ան որ կը փնտռես և որ ես քեզմէ առի, կորսուած Արգիան դուն Կէսիրա, ան ես։

Նոմէոս. Ո՜հ նախագուշակեցի։

Սէսիրա. Ի՞նչպէս, ինչ ըսաւ, ո՞վ եմէս։

Նոմէոս. Դուն ես այնչափ լացուած Արգիան. Արիստոդեմի դուն ես աղջիկը։ Սիրտս ինծի ըսաւ։

Սէսիրա. Ես Արիստոդեմի աղջիկ։ Եւ դուն բարբարոս, դուն գիտէիր ան և լռեցիր։ Ցած մարդ, այս դարշ կոխկռտուած տիղմէն աւելի ցած։ Կը հասկընամ քու խորհուրդդ. բայց երկընքին արդարութիւնը բոլորը ցիրուցան ըրաւ։ Գնա, ինչու որ չեմ դիմանար քու դէմքիդ տեսակին.... ինչ կը դանդաղիմ. թռչիմ հօրս. անոր գիրկը վազենք, իր թշուառութիւնները ուրախութեան փոխելու։

ՏԵՍԱՆԷ.

ԼԻՍԱՆԴՐՈՍ • ՊԱԼԱՄԵԴԷՍ •

Լիսանդրոս. Լսեցիր։

Պալամէդէս. Լսեցի։

Լիսանդրոս. Երթանք, ուրիշ տեղ տարուի իմ խայտառակութիւնս և ամօթս։

Պալամէդէս. Երթանք։ Հիմայ յօժար կամքով կու գամ, ինչու որ բարեկամիս հետ իմ պատիւս չտուժեցի, և ոչ անիրաւ լուութեան մը խիղճը ինծի հետ կը տանիմ։

ՎԱՐԱԳՈՅՐ Է.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԳՈՆԻՊՈՍ • ԵՏՔԸ ԱՐԳԻԱ •

Գոնիպոս. Ո՞ւր ծածկուեցաւ քնաւ. երերուն սրտով կը փնտռեմ զանիկայ։ Եւ դեռ քիչ ատեն է։ — Ինչու խաբել զիս, հանդարտ ձևանալ և ասանկ շուտով ինծմէ անհետանալ։... Արգիա։

Արգիա. Գոնիպոս։

Գոնիպոս. Գտար զինքը։

Արգիա. Տեսար զինքը։

Գոնիպոս. Փուռ տեղը կը փնտռեմ։

Էրֆէա · Այ ինծի ։

Դոնիպոս · Մի խուսվիր, քու հայրդ առանց սուրի է · Եսքիչ մը առաջ անոր վրայէն վերցուցի դաշոյնը, որ ունի ։

Էրֆէա · Վրնվդ է ։

Դոնիպոս · Ահա տես ։

Էրֆէա · Ուրիշ մը գտնայ նէ · ինվ Աստուած · դառնանք փնտռենք զանիկայ ամէն տեղ ։

Դոնիպոս · Այ թէ որ նոյն ժամանակը հոս հասնելու ըլլայ ։

Էրֆէա Այս կը կենամ · գնա, վազէ ատէն չկորսնցընենք ։

ՏԵՍԱՐԱՆ Բ ·

ԱՐԳԻԱ ·

Էրֆէա · Ո՛հ, ինչ բօթալից դուշակութիւն մը առեր է զիս ։ Աբիատոդեմ · · · · հայը իմ · · · · չե՞ս պատասխաներ ։ Ո՛հ, ամէն բան լուռ է և կ'երևնայ թէ միայն կը պատասխանէ ինծի այդ շիրմին արձագանգը ։ Ո՛վ Սուրբ Դէք չըլլայ թէ անոր մէջ պահուրտած ըլլայ ։ Ո՛հ, այո · քիչ մը առաջ ալ նոյնը ըրաւ · զինքը մոլորցուցած է նոր ցնորմունք մը, անշուշտ ։ Ատենանք, տեսնանք · · · · բայց թէ որ ուրուականը · · · Եւ միթէ ես ուրուականներէ վախնալու եմ, երբոր հօր մը կեանքը վտանգի մէջ է ։ Ատենանք · բոլոր Տարտարոսն ալ դիմացս ելլայ, չեմ վախնար (ա) ։

ՏԵՍԱՐԱՆ Գ ·

ԱՐԻՍՏՈԴԵՄ ·

Էրֆոդեմ · Ահա գերեզմանը, ահա սեղանն, որ իմ արիւնովս պիտի ըլլայուի · վերջապէս սա երկաթը գտայ · ծայրը սուր է · ուրեմն զարնենք · · · · կը դողամ դուն ։ Ան ատեն դողալու էիր որ աղջկանդ կուրծքը ծակեցիր, անզգամ ծնող ։ Հիմայ երերալ պէտք չէ · · · · մեռնինք ։ Հեռու գնացէք իմ Ճակատէս խայտառակութեան և մեղքի զարշելի նշաններ ։ Եւ դուն դուրս էլ, դուրս էլ հիմայ որ ժամանակն է, զարհուրելի ուրուական · եկուր քու վրէժխնդրութիւնդ տեսնալու և դու ինքն հարուածը ուղղէ · · · Ընիկայ լսեց ինծի, անիկայ կը վազէ · Էս անոր ոտնաձայնը կը լսեմ · կը դողայ շիրիմը, ահա ինքը · · · · եկուր ալ, արիւն ուզեցիր և այս է արիւնը (բ) ։

ՏԵՍԱՐԱՆ Վ ԵՐՋԻՆ ·

ԱՐԳԻԱ · ԳՈՆԻՊՈՍ · ՆԻՄԻՈՍ ·

ԱՐԻՍՏՈԴԵՄ ·

Էրֆէա · Ո՛հ կեցիր · · · · ափսոս ինչ

(ա) Շիրմին մէջը եր մտնայ ։
(բ) Ինք պիտի եր պրծնէ ։

ըրեր. որ ձիւաղը քեզ մոլորցուց։

Դոնէպոս. Ա՜ազէ, Եւմէոս, սա կողմէն բռնէ զինքը և հոս կոթնցուր։

Երիսոդորէմ. Ձգեցէք զիս ձանձրացընողներ։ Ուշ է, փուտ է ամէն գթութիւն. ձգեցէք զիս։

Երգիա. Հա՛պա, սանձէ այս կատաղութիւնը։ Գիտցիր.... ես եմ.... լայը իմ խօսքերս կը կտրրտէ։

Երիսոդորէմ. Ինչո՞ւ եկար անզգոյշ կեսիրա։ Ես աւելի գոհ և հաճ կը մեռնէի առանց քեզ տեսնալու. անգութ, ո՞վ քեզ խաբեց... և դուն ո՞վ ես գթած ծերուն, որ իմ քովս կու լաս և երեսդ կը ծածկես։ Ես քեզ տեսնալ կ'ուզեմ։ Ի՞նչ կերպարանք։

Եւմէոս. Ա՜հ, Տէր, Էլիր, Ճանչցիր քու հաւատարիմդ....

Երիսոդորէմ. Եւմէոսը։

Եւմէոս. Ա՜յո՛, ես ան եմ։ Եւ քու աղջիկդ....

Երիսոդորէմ. Ա՜ղգիան։

Եւմէոս. Որ ինծի հաւատացիր և կորսուած կարծեցիր....

Երիսոդորէմ. Շատ լաւ։

Եւմէոն. Ա՜ղգէն աչքիդ դիմացը կը կենայ, նայէ անոր, ան է։

Երիսոդորէմ. Ի՞նչ, Կեսիրա իմ աղջի՞կս։

Երգիա. Ա՜հ, սիրական հայր և ինչ օգուտ ունի թէ որ քեզ կորսընցընեմ։

Երիսոդորէմ. Այս ասա՞նկ, ուրեմն, քեզ

ձեռք կը ձգեմ։ Հիմայ լման կը տեսնամ երկնից վրէժխնդրութիւնը. հիմայ մահուան տանջանքը կը զգամ։ Ո՛վ ճանաչմունք, ո՛վ զաւակ։ Մէկ սաստիկ կատաղութիւն մը կուրծքս կը մտնայ և կը ստիպէ զիս նզովել վայրկեանը, որ քեզ կը ճանչնամ։

Երգիա. Խաղմադութ Աստուածներ, ահ դուք ընորհեցէք ինծի իմ հայրս. կամ ձգեցէք զիս անոր հետ մեռնիլ հոս։

Երիսոդորէմ. Ընխեալք, ի՞նչ գթութիւն կը յուսաս Աստուածներէն։ Թէ իրենք կան կը հաւատամ. և ինծի չափազանց կը ստուգեն իմ թշուառութիւններս. բայց դաժան են։ Այս քայլին, ո՛վ աղջիկ, անոնց բարբարոսութիւնը զիս բռնադատեց։

Երգիա. Ո՛վ երկինք, ականջ դիր ինծի և տես իմ արցունքս. ներէ անխոհեմ խօսքերուն։ Ո՛հ, հայր իմ, մի աւելցըներ մեղքեր քու վիշտերուդ վրայ. մեղքերուն մեծագոյնը յուսահատեալներուն հայհոյանքը։

Երիսոդորէմ. Մի՞այն աս աղէկութիւնն է որ ինծի մնաց։ Մի՞թէ սպասեմ գթութիւն այս վիճակիս մէջ։ Եւ խնդրել կրնամ՞ ես, և գիտնալ թէ կ'ուզեմ։

Երգիա. Ո՛վ Աստուած. մէկ դի ձգէ այս սոսկալի երկիւղը, հանդարտեցուր ոգիքդ, երկինք վերցուր աչքերդ։

Դոնէպոս. Ինք կը խոնարհեցընէ զանոնք և շրթունքներուն մէջէն կը մտնայ և գոյնը կը նետէ։

Երիսոդորէմ. Ա՜ղ, ուր կը քաշէք զիս։

Ո՛ւր եմ ես։ Ի՞նչ խաւար անապատ։ Հեռացուցէք այդ դեղին ուրուականները։ Նա որոնն համար են այդ հրացեալ խարազանները։

Ուրֆիա. Սիրտս կը հատնի։

Նոմէոս. Դժբաղդ թագաւոր։

Գոնիպոս Մահուան տագնապը խեղքը գլխէն կը տանի։ Ուրիստոդեմ... իմ տէրս... կը ճանչնաս զիս։ Ես Գոնիպոսն եմ, ասիկայ քու աղջիկդ է։

Ուրիստոդեմ Աղէկ. ինչ կ՚ուզէ իմ աղջիկս. ես զինքը խողխողեցի նէ, լացի ալ։ Մինթէ բաւական չէ՞ վրէժը տալու։ Ո՛հ, թող դիմացս գայ։ Ես ինքն խօսիմ անոր։... Տեսէք զինքը. մազերը դիզացած փուշեր են, և ճակատին վրայ պարապ են աչքերը. ով փորեց զանոնք. ինչո՞ւ ջախջախած քթին ծակերէն արիւն դուրս կու տայ։ Վա՛յ ինծի։ Մնացածին վրայ քօղ մը ձգեցէք. իմ արքունի կրկնոցիս քղանցքովը ծածկեցէք ան. կտոր կտոր ըրէք այդ իր արիւնովը ներկած պսակը, և անոր նշխարներն ու փոշին ցանեցէք երկրիս դահերուն վրայ, և ըսէք թագաւորաց, որ դահը մեղքով չի դնուիր և թէ ես մեռայ....

Գոնիպոս. Ինչպիսի՛ մահ։ Հոգին աւանդեց։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/XI-1922
Անուն: Мясникиана
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

5n

Ա

<< Ազգային գրադարան
NL0312363